



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3K23

7-32

1922

11 SEP 2013

Հ. Ս. Խ. Հ.

30 MAY 2005

Պրախտաբեր բոլոր, երկրների միացիոն

Հանրապետության Գլխավոր Գործընկերության № 1

Ն. ԼԵՆԻՆ

80 NOV 2005

ՊԱՐԵՆՅԱՐԿԻ ՄԱՍԻՆ

(Նոր խաղախաղերի և պայմանագրերի ու նրա
կշարակություններ)



Թարգմ. Թ. Ա.



3K 23
7-32

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
№ 21

1857

3K23
7-325

14.

ՊԱՐԵՆՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ

(Նոր հաղահակահաճարյան հեռահալուրյունն ու հրապայմանները)

ՆԵՐԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՆԱՐԵՆ

Ներկայումս պարենհարկի խնդիրն առանձնադեպ շատ ուշադրություն և գրավում յև կշռադատություններ ու վեճեր առաջ բերում: Այս լիլովին հասկանալի յև, վորովհետև այդ հարցը տվյալ պայմաններում քաղաքականության գլխավոր խնդիրներից մեկն և իրոք:

Հարցի քննությունը մի քիչ խառնափնթոր բընույթ և կրում: Չափազանց հասկանալի պատճառներով քոլորս էլ տառապում ենք այս թերությամբ: Հենց այս պատճառով էլ ավելի ոգտակար կլինի այս խընդրին վոչ թև «որվա չարիքի» տեսակետից, այլ ընդհանուր սկզբունքային կողմից մոտենալու փորձը, որիչ խոսքով հայացք ձգելու այն նկարի ընդհանուր հիմնական ֆոնի վրա, վորի վրա տվյալ սրվա քաղաքականության վորոչ գործնական ձեռնարկումների (мероприятие) նախընդհանր գծում:

Այսպիսի մի փորձ անելու համար թույլ եմ տալիս մի յերկար հատված մեջ բերել իմ այն բրոշյուրից, վոր կրում և «Մեր որերի գլխավոր խնդիրը: — Չախակողմյան «յերեխայության» ու մանր բուրժուականության մասին» վերնագիրը: Այս բրոշյուրը լույս և

Լ ու ս ժ ո ղ կ ո մ տ ի տ պ ա ռ ա ն
Վ ա դ ա ռ Ե ա պ ա տ ու մ

1922

տեսել 1918 թ. Պետրոգրադի պատգամավորների խորհրդի հրատարակութեամբ յետևողականապես և նախ 1918 թ. մարտի 11-ին գրած մի լրագրական հոդված յետևողորդ 1918 թ. մայիսի 5-ին թվագրած մի բանակով ձախ կոմունիստների այն ժամանակվա մի խմբակի դեմ: Բանակովին այժմ հարկավոր չէ, յետևյալը ևս չէ ձգուած: Թողնուած է միայն այն, ինչ վերաբերուած է «Պետական կապիտալիզմի» յետևողական կատարող մեր ժամանակակից տնտեսութեան հիմնական տարրերի մասին յետագայ տողութուններին:

Ահա թե ինչ էլ զրուած յետևյալ ժամանակ:

Ռուսաստանի ժամանակակից տնտեսութեան մասին: (1918 թ. բրտյուրից):

«Մեր Խորհրդային Հանրապետութեան մեջ տիրող գործերի ներկա դրութեան հետ համեմատած պետական կապիտալիզմը մի քայլ առաջադիմութեան կլինի: Յետե, որինակի համար, կես տարուց հետո մեզանում պետական կապիտալիզմ հաստատուի, ապա վիճակարէ առաջադիմութեան կլինի այս, այլ յետևողականապես կը երաշխիք այն բանի, վոր մի տարուց հետո մեզանում վերջնականապես կամրապնդվի յետևողական կապիտալիզմը:

Յետ յերևակայում էմ, թե այս խոսքերը լսելիս ինչ ազնիվ դայրութեով հետու կփախչէ այս կամ այն ընթերցողը... Ինչպէս: Խորհրդային սոցիալիստական հասարակութեան մեջ պետական կապիտալիզմին անցնելը մի քայլ առաջադիմութեան կլինի... Մի՞թէ սոցիալիզմին դավաճանել չէ՞ այս:

Հենց այս կետի վրայ պետք է ավելի մանրամասն կանգ առնել:

Նախ պետք է պարզել, թե վերն և հենց այն անցումը կապիտալիզմից դեպի սոցիալիզմ, վորը մեզ հիմունք ու իրավունք է տալիս Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեան կոչվելու:

Յերկրորդ պետք է մերկայցնել այն մարդկանց սխալները, վորոնք չեն տեսնուած, թե մեզանում սոցիալիզմի գլխավոր թշնամին մանր բուրժուական տնտեսական պայմաններն են ու մանր բուրժուական տարրերը:

Յերրորդ հարկավոր է լավ ըմբռնել Խորհրդային պետութեան նշանակութեանն յուր այն տնտեսական գանազանութեամբ, վորով սա տարրերով է բուրժուական պետութեանից:

Բնենք այս բոլոր հանգամանքները:

Թվում է, թե դեռ յետ չէ յեղել մի մարդ, վոր Ռուսաստանի տնտեսական խնդիրը քննելիս ժխտեր այս տնտեսութեան անցողիկ լինելու բնույթը: Թվում է, վոր վոչ մի կոմունիստ չէ ժխտել նայել այն, վոր «Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան» արտահայտութեանը ցոյց է տալիս խորհրդային իշխանութեան վճռականութեանը դեպի սոցիալիզմ տեղի ունենալիք անցումն իրագործելու յետև յետ յետ Խորհրդային Հանրապետութեան այն մասին, վոր տվյալ տնտեսական կարգերը սոցիալիստական են:

Իսկ ինչ է նշանակում հապա «անցում» բառը: Արդյոք տնտեսութեան վերաբերմամբ կիրառելիս այս բառը ցոյց չի տալիս, վոր տվյալ հասարակարգում կապիտալիզմի ու սոցիալիզմի տարրեր, մասնիկներ ու կողմեր կան: Ամեն վոք ընդունում է, վոր այն բայց այս բանը խոստովանող ամեն մարդ չի խորհրդածում այն մասին, թե հապա վորոնք են հենց այն տարրերը գանազան հասարակական-տնտեսական

կերտվածքները, վորոնք ներկայումս գոյութիւն ունին
Ռուսաստանում: Մնորի մեկն հենց այստեղ է թագնաված:
Թվինք այս տարրերը:

1. Նահապետական, այսինքն նշանավոր չափով
բնական, գյուղացիական տնտեսութիւնը,
2. Մանր ապրանքային արդյունաբերութիւնը
(այս շարքին է պատկանում հացահատիկ ծախող
գյուղացիների մեծամասնութիւնը),
3. Մասնատիրական կապիտալիզմը,
4. Պետական կապիտալիզմը,
5. Սոցիալիզմը:

Ռուսաստանն այնքան մեծ ու բազմերանգ է, վոր
հասարակական-տնտեսական կերտվածքի այս բոլոր
զանազան տիպերը խաչաձև հյուսվում են նրա մեջ:
Այս հանգամանքն է կազմում գրութիւնն առանձնա-
հատկութիւնը:

Հարց է ծագում, թե հապա վեր տարրերն են
գերակշռում: Պարզ բան է, վոր մանր գյուղացիական
միջավայրում մանր բուրժուական տարրերն է գերա-
կշռում յե չի յե կարող չգերակշռել: Հողագործները
մեծամասնութիւնն յե այն ել վիթխարի մեծամաս-
նութիւնը մանր ապրանքային արտադրողներ են: Մե-
ղանում պետական կապիտալիզմի (հացահատիկի մե-
նաշնորհը, վերահսկողութիւն յինթակա ձեռնարկողներ
ու առևտրականներ, բուրժուական կոոպերատորներ)
կեղևը պատում են մերթ այստեղ ու մերթ այնտեղ
սպեկուլյանտները, յե սպեկուլյացիայի գլխավոր
առարկան հացն է:

Գլխավոր կորիզը ծավալվում է հենց այս ասպա-
րեզում: Ո՛ւմ յե համ միջև է տեղի ունենում այս կորիզը,
յեթե խոսենք տնտեսական կաթեգորիայների տերմին-
ներով, ինչպիսին է «պետական կապիտալիզմը»: Ար-

դյոք այս բոպեյին թվածս կարգով շորբորդ ու հին-
գերորդ աստիճանները միջև: Ի հարկե՛ վոչ: Այստեղ
սոցիալիզմի դեմ մարտնչում է վոչ թե պետական կա-
պիտալիզմը, այլ մանր բուրժուալիզմն, դումարած
մասնատիրական կապիտալիզմը, միյասին, միյահա-
մուռ թե պետական կապիտալիզմի ու թե սոցիալիզմի
դեմ: Մանր բուրժուալիզմն հակառակ է կանգնում
ամեն տեսակի պետական, ինչպես պետական—կապի-
տալիտական, այնպես յև պետական—սոցիալիտա-
կան, միջամտութիւնը, հաշվառքին (учет) ու վերա-
հսկողութիւնը: Իրականութիւնն միյանգամայն անա-
ռարկելի փառան է այս, վորը չբմբռնելու մեջ է թագ-
ված մի շարք տնտեսական սխալները արժատը:
Սպեկուլյանտը, առևտրի գիշատիչը, մենաշնորհը պայ-
թեցնողը—անա մեր գլխավոր ներքին թշնամին, խոր-
հրդային իշխանութիւնն տնտեսական ձեռնարկումների
թշնամին: Յեթե 125 տարի առաջ Փրանսական մանր
բուրժուաներին, ամենապայծառ ու ամենից անկեղծ
հեղափոխականներին գեոյես ներելի յեք առանձին,
սակավաթիվ «ընտրյալներին» պատժելով ու գեկլա-
րացիյաների վորոտներով սպեկուլյանտին հաղթահա-
րելու ձգտումը, ապա այժմ այս կամ այն ձախ ես-երի՛
խնդրին զուտ Փրանսական վերաբերմունք ցույց տալն
յուրաքանչյուր գիտակից հեղափոխականի մեջ զգվանք
ու նողկանք է հարուցանում: Մենք լավ գիտենք, վոր
սպեկուլյացիայի տնտեսական հիմքը մանր սեփակա-
նատերի՛ Ռուսաստանում արտասովոր լայն ծավալ
ունեցող խաւն է, այլ յև մասնատիրական կապիտա-
լիզմը, վոր հանձինս յուրաքանչյուր մանր բուրժուալի
յուր գործակալն ունի: Գիտենք, վոր այս մանր բուր-
ժուական հիղբայի միլիոնավոր շոշափուկները մերթ
այստեղ, մերթ այնտեղ ընդգրկում են բանվորութիւն

առանձին փոքրիկ շերտերը, դիտենք, վոր պետական մենաշնորհի փոխարեն սպեկուլյացիայն ներս ե խուժում մեր տնտեսական—հասարակական կյանքի թուր արանքները:

Ով այս չի նկատում, նա հենց յուր կուրուլթյամբ յերևան ե հանում, վոր մանր բուրժուական նախապաշարունքներին գերի յե մնացել:

Մանր բուրժուական փողերի պաշար ունի, մի քանի հազար բուրլի, վոր պատերազմի ընթացքում նա կուտակել ե «արդարությամբ» ու մանավանդ ստությամբ: Ահա այս ե այն տնտեսական տիպը, բնորոշ, իբրև սպեկուլյացիայի ու մասնատիրական կապիտալիզմի հիմք: Փողը մի վկայական ե հասարակական հարստությունից բաժին ստանալու համար, յե մանր սեփականատերերի այս բազմամիլյոն շերտն ամուր բռնած պահելով այս վկայականը՝ թագցնում ե «պետությունից»՝ վոչ մի սոցիալիզմի ու վոչ մի կոմունիզմի չհավատալով յե պրոլետարական փոթորկից «հեռու պպզելով»: Կամ մենք այս մանր բուրժուային մեր վերահսկողությանն եւ հաշվառքին կենթարկենք (իսկ այս կարող ենք անել, յեթե կազմակերպենք աղքատներին, այսինքն ազգաբնակչության մեծամասնությունը կամ բանվորներին պրոլետարական դիտակից առաջապահ գնդի շուրջը) յե կամ նա, մանր բուրժուան մեր բանվորական իշխանությունն անխուսափելի ու անպրժում կերպով կտապալի, ինչպես տապալեցին հեղափոխությունը Նապոլյոններն ու Կավենյակը, վորոնք աճել ու զորացել եյին այս մանր բուրժուական հողաշերտի վրա: Այսպես ե դրւած խնդիրը: Միշայն այսպես ե դրված խնդիրը:

Հազարները պահող, թագցնող մանր բուրժուան պետական կապիտալիզմի թշնամին ե, յե այս հազար-

ները նա ցանկանում ե իրացնել (реализовать) անպայման յուր համար, աղքատների հակառակ, ընդհանուր պետական ամեն տեսակի վերահսկողության հակառակ, իսկ այս հազարների ընդհանուր դումարը սպեկուլյացիային պարզում ե մի բազմամիլյարդ հիմք, վորն արմատախիլ ե անում մեր սոցիալիստական շինարարությունը: Յենթազրենք, վոր վորոշ քանակով բանվորներ վորոշ ժամանակամիջոցում տալիս են արժեքների մի դումար, վոր արտահայտվում ե 1,000 թվանշանով: Այնուհետև յենթազրենք, վոր մեզանում այս դումարից 200-ը կկորչի մանր սպեկուլյացիայի, ամեն տեսակի հափշտակության ու մանր բուրժուական այն «պանցատությունների» շնորհիվ, վոր կտարում են խորհրդային դեկրետների ու խորհրդային կարգադրությունների վերաբերմամբ: Յուրաքանչյուր գիտակից բանվոր կասե, յեթե յես կարողանայի այս 1,000-ից 300-ը տալ ավելի կարգ ու կազմակերպություն ստեղծելու գնով, հոժարությամբ 200-ի փոխարեն 300 կտայի, վորովհետև խորհրդային իշխանության ժամանակ այս «տուրքը», յենթազրենք, մինչև հարյուր կամ հիսուն իջեցնելը բոլորովին հեշագործ կլինի, յեթե մանր սեփականատերերի՝ ամեն տեսակի պետական մենաշնորհ պայթեցնելը վերջնականապես կհաղթահարվի:

Այս հասարակ թվական որինակով վորին դիտմամբ վերին աստիճանի պարզ բնույթ ենք տվել շարադրությունը մատչելի դարձնելու համար, պարզվում ե պետական կապիտալիզմի ու սոցիալիզմի այժմյան դրության փոխհարաբերությունը: Բանվորների ձեռքումն ե պետական իշխանությունը, նրանք իրավական լիակատար հնարավորություն ունեն «առնելու» ամբողջ հազարը, այսինքն վոչ մի կուպեկ չտա-

լու այն դեպքերում, յերբ սոցիալիստական նպատակով գործադրութիւնը բացակայում է: Այս իրավական գրութիւնը, վոր փաստապէս իշխանութիւնը բանվորների ձեռքն անցնելու վրայ յի հենվում, սոցիալիզմի մի տարրն է: Բայց մանր սեփականատիրական ու մասնավոր կապիտալիստական տարերքները փորում են այս իրավական գրութիւնն տակը, ծավալում են սպեկուլյացիան, խանդարում են խորհրդային գեկրետները իրագործումը: Պետական կապիտալիզմը մի վիթխարի քայլ առաջագիմութիւն կլինի, յերբ նույն իսկ մենք (յես գիտամամբ վերցրի թվական այսպիսի որինակ, վորպեսզի ավելի ցայտուն ցույց տամ այս), յեթե նույն իսկ մենք վճարենք սվեիլ օտո, քան հիմա, վորովհետեւ «գիտութիւն համար» արժե վճարել, վորովհետեւ այս ոգտակար է բանվորներին, վորովհետեւ ամենից կարևորը անկարգութիւնը, քայքայումը, գլուխը կորցրած թափթփածութիւնը հազթահարելն է, վորովհետեւ մասնավոր սեփականատիրական անիշխանութիւնն շարունակվելը ամենամեծ, ամենից անարկու վտանգն է, վոր մեզ անպարսան դեպի կորուստ կտանն (յեթե մենք նրան չհազթենք), այն ինչ պետական կապիտալիզմին մեծ աուրբ տալը վոչ միայն մեզ դեպի կորուստ չի տանիլ, այլ ամենաճիշտ ճանապարհով մեզ կհասցնի սոցիալիզմին: Բանվոր դասակարգը, վոր սովորած կլինի, թի ինչպես պետք է պաշտպանել ընդհանուր պետական կարգը անիշխանութիւնն դեմ, վոր սովորած կլինի, թի ինչպես պետք է պետական կապիտալիստական սկզբունքներով կարգի դնիլ արտադրութիւնն խոշոր, համապետական կազմակերպութիւնը, յուր ձեռքում կունենա—ներեցեք արտահայտութիւնս—բոլոր գլխավոր խաղաթղթերը, և սոցիալիզմի ամրապնդումն ապահովված կլինի:

Պետական կապիտալիզմը տնտեսապէս անհամեմատ ավելի բարձր է, քան մեր այժմյան տնտեսութիւնը.—այս առաջին:

Յերկրորդ՝ նրա մեջ վոչ մի սարսփելի բան չկա խորհրդային իշխանութիւնն համար, վորովհետեւ խորհրդային պետութիւնը մի պետութիւնն է, վորի մեջ բանվորների ու աղքատների իշխանութիւնն տապահովված է:

* *

Խնդիրն էլ ավելի պարզելու համար ամենից առաջ բերենք պետական կապիտալիզմի ամենաթանձրացյալ ուրինակը: Բոլորին յայտնի յի, թի վորն է այն ուրինակը: Գերմանիան է: Այստեղ տեսնում ենք «վերջին խոսքը» ժամանակակից խոշոր կապիտալիստական տեխնիկայի ու ծրագրաչափ կազմակերպութիւնն, վոր յեկրարկվում է յունկերա—բուրժուական իմպէրիալիզմին: Ինն ձգեցեք ընդգծածս բառերը, զինվորական, յունկերական, բուրժուական, իմպէրիալիստական պետութիւնն տեղ դրեք մի պետութիւնն, միայն այլ սոցիալական տիպի, այլ դասակարգային բովանդակութիւնն ունեցող պետութիւնն, խորհրդային այսինքն պրոլետարական պետութիւնն, յի դուք կըստանաք պայմանների այն գումարը, վոր տալիս է սոցիալիզմը:

Սոցիալիզմն աներևակայելի յի առանց նորագոյն գիտութիւնն վերջին խոսքի համաձայն կաուուցած խոշոր կապիտալիստական տեխնիկայի, առանց ծրագրաչափ պետական կազմակերպութիւնն, վոր տասնյակ միլիոնավոր մարդկանց յենթարկում է արտադրութիւնն ու բաշխման գործում միյասնական նորման ամենախիստ կերպով պահպանելուն: Այս մասին մենք, մարք-

սխտաներս, միշտ ասել ենք, յև այն մարդկանց հետ, վորոնք նույն իսկ այս բանը չեն հասկացել, (անարխիստաներ, ձախ ես—երների համարյա կես մասը) յերկու վայրկյան անգամ չարժե կորցնել խոսելու համար:

Միյաթամանակ՝ սոցիալիզմն աներևակայելի յե առանց բանվորի՝ պետութեան մեջ նվաճած տիրապետութեան. այս նույնպէս այբուբենն է: Պատմութեանը (վորից վոչ վոք, բացի գուցե մենշիկ առաջնակարգ թթագլուխներից, չնր սպասում, վոր նա հարթ, հանդարտ, հեշտ ու պարզ կերպով «ամբողջական» սոցիալիզմ տար) այնպէս յուրահասուել յեղանակով ընթացավ, վոր 1918 թվի մոտերքը ծնեց սոցիալիզմի՝ իրարուց անջատ յերկու կեսերը, կողք կողքի, ինչպէս յերկու ապագա ճտեր միջազգային իմպերիալիզմի կեղեի տակ: Գերմանիայն ու Ռուսաստանը 1918 թվին հանձինս իրենց՝ ամենից ավելի ակներև մարմնացնում եյին մի կողմից սոցիալիզմի անտեսական, արտադրական, հասարակական—անտեսական պայմանների նյութական իրականացումը յև մյուս կողմից՝ սոցիալիզմի քաղաքական պայմանների իրականացումը:

Պրոլետարական հաղթական հեղափոխութեանը Գերմանիայում միյանգամից, վիթխարի հեշտութեամբ կշարխախտեր իմպերիալիզմի ամեն տեսակի կեղև (վորը դժբախտաբար շատ լավ պողպատից է շինած յև այս պատճառով էլ ամեն մի ճտի ջանքերով չի կոտորվում), կիրականացնէր համաշխարհային՝ սոցիալիզմի հաղթանակն ստուգապէս, առանց դժվարութեաններէ կամ չնչին դժվարութեաններով, — ի հարկե, յեթե «դժվարի» մասշտաբը վերցնենք համաշխարհային—պատմական և վոչ թե կենվորի (Обыватель) նեղ խմբական չափերով:

Յեթե հեղափոխութեանը Գերմանիայում տա-

կավին դանդաղում է ծնվելու, ապա մեղ մի խնդիր է քնուկ—սովորել գերմանացոց պետական կապիտալիզմը, բոլոր ուժերով փոխ առնել այն, չխնայել վոչ մի դիքտատորական միջոց այն բանի համար, վոր բարքարոսական Ռուսաստանի՝ արևմտապաշտութեան ընդորինակումն արագ ընթանա, յև այս նպատակով բարբարոսութեան դեմ կովելու համար կանգ չառնել վոչ մի բարբարոսական միջոցի առաջ: Յեթե անարխիստաների ու ձախ ես—երների մեջ կան մարդիկ, (յես հանկարծակի հիշեցի Կարելինի ու Գէի ճառերը Կենտր. Գործ. կոմիտէյում), վորոնք ընդունակ են Կարելինի նման դատելու, վոր իբր թե մեղ, հեղափոխականներին վայել չէ գերմանական իմպերիալիզմից «դաս առնել», ապա պետք է մի բան տեսլ. անհուսալիորեն (ու լիյովին իրավացի կերպով) կորած կլինեն այն հեղափոխութեանը, վոր այդպիսի մարդկանց լրջորեն բանի տեղ կ'գնեն:

Ներկայումս Ռուսաստանում գերակշռում է հենց մանր բուրժուական կապիտալիզմը, վորից դեպի խոշոր պետական կապիտալիզմն ու սոցիալիզմը միջնվնոյն նախապարհն է տանում, տանում է այն ուղին, վոր անցնում է ճանապարհի կիսին ընկած միլիոնոյն կայարանով, մի կայարան, վոր կոչվում է «արդյունքների արտադրութեան համաժողովրդական հաշվառք ու վերահսկողութեան»: Ով այս չի հասկանում, արեստեսական ամենաաններելի սխալն է գործում՝ կամ իրականութեան փաստերը չիմանալով, յեղածը չտեսնելով, ճշմարտութեան յերեսին նայել չկարողանալով կամ սահմանափակվելով «կապիտալիզմի» ու սոցիալիզմի վերացական հակադրութեամբ յև խոր չըմբռնելով այս բոպեյին մեղանում կատարվող այս անցման քանձաղայլ ձևերն ու աստիճանը:

Փակագծի մեջ ասենք, վոր այս այն թիորիյական
 սինալն է, վոր մոլորեցրեց „Новая Жизнь“—ի ու
 „Вперед“—ի բանակի ամենալավ մարդկանց, սրանց
 միջի վատերն ու միջակները բթամտության ու բնա-
 վորությունն չունենալու պատճառով բուրժուազիյայից
 սարսափած՝ սրա պոչից են կախ ընկել. նրանց միջի
 յալիքը չհասկացան, վոր սոցիյալիզմի ուսուցիչները
 խոսում էին կապիտալիզմից դեպի սոցիյալիզմ անց-
 նելու մի ամբողջ ժամանակաշրջանի մասին յև ի գուր
 չեր, վոր նրանք ընդգծում էին նոր հասարակության
 գերիշունքի յերկար ցավերը: Պետք է այն ել ասել.
 վոր այս նոր հասարակությունը նմանապես մի վերա-
 ցական զարգիւթ է, վորը կյանքում այլ կերպ չի
 կարող մարմնանալ, բայց յեթէ այս կամ այն սոցիյա-
 լիստական պետութիւնն ստեղծելու բազմազան, ան-
 կատար ու թանձրացյալ փորձերի միջոցով:

Հենց այն պատճառով, վոր Ռուսաստանի այժմ-
 մյան արևոտական դրությունից առաջ գնալ չի կա-
 ղելի առանց անցնելու այն կարգերով, վոր ընդհանուր
 է թէ պետական կապիտալիզմի ու թէ սոցիյալիզմի
 համար (համաժողովրդական հաշվառք ու վերահսկո-
 ղություն), թիորիյական անհեթեթություն է իրան յև
 ուրիշներին «դեպի պետական կապիտալիզմի կողմը
 կատարվող եվոլյուցիյայով» վախեցնելը: Այս նշանա-
 կում է՝ մոլորված մտքով դեգերել հենց «եվոլյուցի-
 յայի» իրական «ճանապարհից դուրս», չըմբռնել այս
 ճանապարհը. իսկ գործնականում այս համազոր է
 դեպի հետ, դեպի մանր սեփականատիրական կապի-
 տալիզմի կողմը քաշ տալուն:

Վորպեսզի ընթերցողը համոզվի, վոր յևս միյայն
 հիմա չեմ «բարձր» գնահատություն տալիս պետական
 կապիտալիզմին, այլ բոլշևիկների իշխանությունը

նկաճելուց առաջ եմ տվել, թույլ եմ տալիս մեջ բե-
 րելու հետեյալ հատվածն իմ այն բրոշյուրից, վոր
 գրված է 1917 թվականին յև կրում է «Սպառնացող
 աղետն յև ինչպես պետք է նրա դեմ կռվել» վերնա-
 գերը:

«Փորձեցեք յունկերա—կապիտալիստական, կալ-
 վածատիրա—կապիտալիստական պետության սեղ դնել
 հեղափոխական դեմոկրատական պետություն, այսինքն
 մի պետություն, վոր հեղափոխականորին խորտակում
 է ամեն տեսակի արտոնությունները, վոր չի վախե-
 նում հեղափոխական միջոցներով ամենալիյակատար
 դեմոկրատիզմն իրականացնելուց: Գուր կտեսնեք, վոր
 պետական—մենաշնորհված կապիտալիզմն իրապես հե-
 զափոխական դեմոկրատիկ պետության մեջ անխու-
 սափելի ու անշեղ կերպով նշանակում է մի քայլ առաջ
 դեպի սոցիյալիզմը:

Վորովհետև սոցիյալիզմը վոչ այլ ինչ է, յեթէ
 վոչ ամենամերձակա քայլը պետական—կապիտալիս-
 տական մոնոպոլիյայից առաջ անցնելու համար:

Պետական մենաշնորհված կապիտալիզմը սոցի-
 յալիզմի նյութական ամենալիյակատար նախապատ-
 րաստությունն է, նրա նախադուռն է, պատմական
 սանդուխքի այն աստիճանն է, վորի (այս աստիճանի)
 ու մյուս, սոցիյալիզմ կոչվող աստիճանի արանքում
 վոչ մի ուրիշ աստիճան չկա» (եր. 27 ու 28):

Նկատի ունեցեք, վոր այս գրիւ եմ հիերենսկու
 ժամանակ, յև վոր այստեղ խոսքը վոչ քի սոցիյալիս-
 տական պետության մասին է, այլ «հեղափոխական—
 դեմոկրատիկ» պետության: Միթէ պարզ չէ, թէ վոր-
 քան ավելի մենք վեր ենք բարձրացել քաղաքական
 այս աստիճանից, վորքան ավելի լիյավիճ մարմնացրել
 ենք խորհուրդներում սոցիյալիստական պետությունն

ու պրոլետարիատի դիքտատուրան, այնքան ավելի մեզ էիջ է թոյլատրելի վախենալ «պետական կապիտալիզմից»: Միթե պարզ չէ, վոր նյութական, տնտեսական, արտադրական իմաստով վերցրած՝ մենք դեռ յես սոցիալիզմի «նախադուան» մեջ չենք գտնվում: Յե միթե պարզ չէ նոյնպես, վոր ատանց այս «նախադուանով» անցնելու, վորին դեռ չենք հասել, հնարավոր չէ սոցիալիզմի դռնից ներս մտնել:

* * *

Չափազանց ուսանելի յե նայե հետևյեալ հանգամանքը:

Յերը ընկեր Բուխարին հետ վիճում էյինք կենտրոնործ. կոմիտեյում, նա ի միջի այլոց նկատեց. մասնագետներին մեծ ուժիկ սալու խնդրում «մենք» «լենինից աջ ենք», վորովհետև այստեղ սկզբունքներից վոչ մի շեղում չենք տեսնում՝ հիշելով Մարքսի այն խոսքերը, թե վորոշ պայմաններում բանվոր դասակարգի համար ամենից նպատակահարմար կլիներ վճարելով ազատվել այս ավազակախմբից (կապիտալիստների նվազակախմբից, այսինքն բուրժուազիյայից գնել հողը, Փարբիկաները, գործարաններն ու արտադրութայան մյուս միջոցները):

Այս չափազանց հետաքրքրական նկատողություն է:

Թափանցեցեք Մարքսի ասածների իմաստի մեջ:



Խնդիրը վերաբերում էր անցյալ դարի 70-ական թվականների Անգլիային, յերը նախամենաշնորհված կապիտալիզմը գտնվում էր գագաթնակետային ժամանակաշրջանում, խոսքը մի յերկրի մասին էր, վորտեղ այն ժամանակ ամենից ավելի քիչ գործառություն (военщина) ու բյուրոկրատիյա կար, մի յերկրի, վորտեղ այն ժամանակ ամենից ավելի շատ հնարա-

վորություններ կային սոցիալիզմի «խաղաղ» հաղթանակի համար՝ այն իմաստով, վոր բանվորները բուրժուազիյային «փրկանք» տալով գործը գլցելու բերեյին: Եւ Մարքսն ասում էր. վորոշ պայմաններում բանվորներն ամենևին չեն հրաժարվիլ բուրժուազիային փրկանք վճարելուց: Մարքսն իր ու սոցիալիստական հեղափոխութայն ապագա գործիչներին ձեռքերը չեր կաշկանդում հեղաշրջման յեղանակների, կերպերի ու ձևերի հարցում՝ հիյանալի հասկանալով, թե այն ժամանակ վորքան բազմաթիվ նոր խնդիրներ առաջ կգան, թե ինչպես կփոխվի հեղաշրջման ընթացքում իրերի դասավորությունը, յե այս վորքան հաճախ յե ուժգին կփոփոխվի հեղաշրջման ընթացքում:

Իսկ Խորհրդային Ռուսաստանում պրոլետարիատի՝ իշխանությունը նվաճելուց հետո, շահագործողների ռազմական ու նենդադուլային (саботаж) դիմադրությունն ընկճելուց հետո, միթե ակնհայտի չէ, վոր մի քանի պայմաններ դասավորվել են այն պայմանների նմանութայմբ, վորպիսիք կարող էյին կազմվել կես դար առաջ Անգլիայում, յեթե այս յերկիրն այն ժամանակ խաղաղ անցներ գեպի սոցիալիզմ: Անգլիայում կապիտալիստներին՝ բանվորներին յենթարկվելը կարող էր ապահովվել հետևյալ հանգամանքներով.

- 1) վոր ազգաբնակչության մեջ գյուղացիութայն բացակայութայն հետևանքով բանվորները, պրոլետարները թվով լիյովին գերակշռում էյին. (բացի սրանից՝ Անգլիայում 70-ական թվականներին նշաններ կային, վորոնք թույլ էյին տալիս հուսալու, վոր գյուղական բանվորների միջև սոցիալիզմը չափազանց արագ ընթաց հաջողությունների կունենա):
- 2) վոր պրոլետարիատը գերազանց կազմակերպված էր արհեստակցական մի-

1907
1111
1001



յությունները մեջ (այս կողմից Անգլիայն այն ժամանակ յերկրագնդիս վրա առաջին յերկիրն եր). 3) վոր պրոլետարյաան ոժտոված եր համեմատաբար բարձր կուլտուրականությամբ յե քաղաքական ազատության գարավոր դարգացման շնորհիվ կրթված ու յեփված եր. 4) վոր Անգլիայի հոյակապորեն կազմակերպված կապիտալիստները յերկար ժամանակներից ի վեր սովորությունն էյին ձեռք բերել քաղաքական ու տընտեսական խնդիրները փոխզիջումներով վճռելու. (այն ժամանակ նրանք էյին յերկրագնդի բոլոր յերկրները կապիտալիստների մեջ ամենալավ կազմակերպվածները. այժմ այս առաջնությունն անցել է Գերմանիային): Անա թե ինչ հանգամանքներում կարող եր միտք ծագել այն մասին, թե Անգլիայում հնարավոր է, վոր կապիտալիստները խաղաղ յենթարկվին բանվորներին:

Ներկա բոլային մեղանում այս յենթարկվելն ապահովված է վորոշ թանձրացյալ նախադրյալներով. (հոկտեմբերյան հաղթությամբ յե կապիտալիստները՝ հոկտեմբերից փետրվար տեող ուղղմական ու նհնգագուրային դիմադրությունն ընկճելով): Մեղանում ազգաբնակության մեջ բանվորների, պրոլետարների թվական գերակշռության ու նրանց բարձր կազմակերպվածության փոխարեն հաղթության գործոն հանգիսացավ այն հանգամանքը, վոր ամենից աղքատ ու սոսկալիցորեն քայքայված գյուղացիությունը պրոլետարներին նեցող հանդիսացավ: Վերջապես մեղանում քացակայում են թե բարձր կուլտուրականությունն ու թե փոխ զիջումների սովորությունը: Յեթե լավ մտածենք այս թանձրացյալ պայմանների մասին, ապա մեզ համար պարզ կլինի, վոր մենք կարող ենք յե պարտական ենք աշխատելու, վոր միյացնենք անխնա բնաջրեջման ու կոմպրոմիսի ու փրկանքի յեղանակները. անխնա

քնաջնջումն այն անկուլտուրական կապիտալիստների, վորոնք մոշ մի «պետական կապիտալիզմի» ընդառաջ չեն գնում, մոշ մի կոմպրոմիս մտքով չեն անցկացնում, վորոնք շարունակում են սպեկուլյացիայով ու աղքատներին կաշառելով յե այն պայթեցնել խորհրդային ձեռնարկումները. իսկ կոմպրոմիս ու փրկանք այն կապիտալիստների վերաբերմամբ, վորոնք հոժարակամ դիմում են «պետական կապիտալիզմին», ընդունակ են այս կերպուրու կյանքում յե ոգտակար են պրոլետարիյատին իբրև խոշորագույն ձեռնարկություններ ինչոք ու փորձառու կազմակերպողներ, ձեռնարկություններ, վորոնք իրոք ընդգրկում են տասնյակ միլյոնավոր մարդկանց արդյունքներ մատակարարելու գործը:

Բուխարինն հրաշալի զարգացած մարքսիստ տեսեսագետ է: Այս պատճառով նա հիշել է, վոր Մարքսը խորապես իրավացի յեր, յերբ բանվորներին սովորեցնում եր, թե հենց սոցիալիզմին անցնելը հեշտացնելու շահերի տեսակետից կարևոր է խոշորագույն արտադրության կազմակերպությունը պահպանել, յե վոր լիյովին թույլատրելի յե այն միտքը, թե յեթե հանգամանքներն այնպես կզստավորվեն, (իբրև բացառուրյուն, վորովհետև Անգլիայն այն ժամանակ բացառությունն եր), վոր կապիտալիստներին կհարկադրեն խաղաղ յենթարկվելու բանվորներին յե կուլտուրական յեղանակով, կազմակերպված կերպով անցնելու սոցիալիզմին փրկանք վճարելու պայմանով, ապա ավելի լավ է վճարել կապիտալիստներին յե փրկանքով գնել նրանցից արտադրության միջոցները:

Սակայն Բուխարինը սխալանքի մեջ է ընկել, վորովհետև չի խորհրդածել Ռուսաստանի ներկա բոլայի թանձրացյալ առանձնահատկության մասին, հենց

բացառիկ մի բոլորի, յերբ մենք, Ռուսաստանի պրո-
 լետարիայաբ, մեր քաղաքական կարգերով, բանվորներէ
 քաղաքական իշխանութեան հզորութեամբ ամեն Մագլի-
 յայից ել ու ամեն Գերմանիայից ել առաջ ենք
 կանգնած յե միջնուշն ժամանակ բարեկարգ պետական
 կապիտալիզմի կազմակերպութեամբ, կուլտուրայի մա-
 կարդակով, սոցիալիզմը «մտցնելու» նյութական-ար-
 տադրական նախապատրաստութեան աստիճանով Արև-
 մտյան Յերոպայի ամենանետամաց պետութիւններէ
 րից ել Անտ ենք մնացել: Միթե պարզ չե, վոր այս
 առանձնահատուկ դրութիւնից ըզխում ե հենց առանձ-
 նահատուկ «փրկանքի» անհրաժեշտութիւնը, մի փըր-
 կանք, վոր բանվորները պետք ե առաջարկեն ամենա-
 կուլտուրական, ամենատաղանդավոր, կազմակերպչա-
 պես ամենից ընդունակ կապիտալիստներին, վորոնք
 պատրաստ են խորհրդային իշխանութեան մոտ ծառա-
 յութեան մտնելու ե բարեկարգորեն նպաստելու պե-
 տական խոշոր ու խոշորագուշն արտադրութեան կազ-
 մակերպութեանը: Միթե պարզ չե, վոր այսպիսի
 առանձնահատուկ դրութեան ժամանակ մենք պետք ե
 խուսափենք յերկու տեսակ սխալներից, վորոնցից
 ամեն մեկը յուրապես մանր բուրժուական ե: Մի կող-
 մից անուղղելի սխալ կլիներ հայտարարելը, թե մի
 անգամ վոր ընդունում ենք մեր տնտեսական «ուժերի»
 ու քաղաքական ուժի անհամապատասխանութիւնը,
 ապա «հետեաբար» չպետք եր խլել իշխանութիւնը:
 Այսպես դատում են «պատյանի միջի մարդիկ», վո-
 րոնք մոռանում են, վոր յերբեք համապատասխանու-
 թիւն չի լինիլ, վոր այն չի կարող լինել հասարա-
 կութեան զարգացման, ինչպես յե բնութեան զարգաց-
 ման մեջ, վոր մի շարք փորձերի միջոցով միայն, վո-
 րոնցից յուրաքանչյուրն առանձին վերցրած միջակող-

մանի կլինի ու վորոշ անհամապատասխանութեան
 թերութիւնը կունենա, — կստեղծվի հաղթական սոցի-
 յալիզմը բոլոր յերկրների պրոլետարների հեղափո-
 խական աշխատակցութիւնից:

Մյուս կողմից ակնհայտնի սխալ կլիներ ազա-
 տութիւն տալ ազմուկ, ազազակ բարձրացնողներին ու
 շաղակրատներին, վորոնք իրանց թույլ են տալիս
 զրավիել «վառ» հեղափոխականութեամբ, բայց վորոնք
 զուսպ, մտածված, կշոված, ամենադժվար անցումներն
 ել հաշի առնող հեղափոխական գործունեութեան
 անընդունակ են:

Հեղափոխական կուսակցութիւնների գարգաց-
 ման ու բոլրակիզմի՝ նրանց դեմ վարած պայքարի
 պատմութիւնը բարեբախտաբար մեզ ժառանգութիւն
 ե թողել խիստ վորոշ գծոված տիպեր, վորոնց միջից
 ձախ ես—երներն ու անարխիստները բավական ակներե
 մարմնացնում են վատթար հեղափոխականների տիպը:
 Նրանք այժմ գոռում, ջղագարութեամբ թարտացող
 կանչերով աղաղակում են «ալ բոլրակիւնների» «համա-
 ձայնականութեան» դեմ: Բայց նրանք մտածել չեն
 կարողանում այն մասին, թե ինչով ե վատ «համա-
 ձայնականութիւնն» յե ինչու պատմութիւնն ու հե-
 ղափոխութեան ընթացքը արգարացի դատապարտել
 են այն:

Կերենսկու ժամանակվա համաձայնականութիւնն
 իշխանութիւնը հանձնում եր իմպերիալիստական բուր-
 ժուազիյային, իսկ իշխանութեան խնդիրն յուրաքան-
 չյուր հեղափոխութեան կենտրոնական խնդիրն ե: 1917
 թ. հոկտեմբեր-նոյեմբերին բոլրակիւնների մի մասի հա-
 մաձայնականութիւնը կամ վախենում եր պրոլետարի-
 յատի՝ իշխանութիւնը խլելուց յե կամ ցանկանում եր
 իշխանութիւնը հավասարապես բաժանել վոչ միայն

«անհուսալի ուղեկիցները» հետ, վորպիսիք են ձախ-
ես-երները, այլ չև մեր թշնամիները, չեճնովականները»
մենշեխները հետ, վորոնք անխուսափելի կերպով մեզ
կխանգարեյին հիմնական խնդրում, Մահամանադիրը
ցրելում, Բողայեակիներին անխնա խորտակելում,
խորհրդային հիմնարկությունները լեյովին կյանքի
մեջ մտցնելիս, յուրաքանչյուր կոնֆիսկացիայի ժա-
մանակ:

Այժմ իշխանությունը գրաված, պահպանված
ու ամբաստանված է մեր կուսակցության, պրոլետա-
րիատի կուսակցության ձեռքում՝ նույն իսկ առանց
«անհուսալի ուղեկիցները» աջակցության: Համաձայ-
նականության մասին խօսել այժմ, յերբ նույն իսկ
խօսք չի կարող լինել իշխանությունը բաժանելու, կամ
պրոլետարիատի՝ իշխանությունից հրաժարվելու մասին,
նշանակում է պարզապես թուլակի նման կրկնել սեր-
տած, բայց անհասկանալի բռուեր: «Համաձայնակա-
նություն» անվանել այն, վոր հասնելով մի զրույթյան,
յերբ կարող ենք յե պարտավոր ենք յերկիրը կառա-
վարելու, յերբ առանց փողին փոստելու աշխատում
ենք մեր կողմը դրավել կապիտալիզմի վարժեցրած
տարրերից ամենակուլտուրականներին յե սրանց ծա-
ռայության ընդունել ընդդեմ մանր սեփականատիրա-
կան քայքայման, այս նշանակում է՝ ամենևին չկա-
րողանալ սոցիալիստական շինարարության անտե-
սական խնդիրների մասին մտածել» . . .

Պարեննարկի մասին, առեկտրի օգտաւորյան
մասին, կոնցեսիայաների մասին, կապիտալիզմի մասին

1918 թ. հայանած այս դատողություններում,
վոր մեջ բերինք, մի շարք սխալներ կան պայմանաժա-

մերի մասին: Պայմանաժամերն ավելի յերկար գուր-
յեկան քան այն ժամանակ յենթադրում էյինք: Այս
զարմանալի չէ: Բայց մեր անտեսութեան հիմնական
տարրերը ֆուսցել են նույնը: Գյուղական «աղքատները»
(պրոլետարներն ու կիսապրոլետարները) շատ բազմա-
թիվ դեպքերում միջակ գյուղացիներ են դարձել:
Սրանից մանր սեփականատիրական, մանր բուրժուա-
կան «տարրերը» դորեղացել է: Իսկ 1918—1920 թվա-
կանների քաղաքացիական պատերազմը յերկրի քայ-
քայումը սաստկացրեց, նրա արտադրող ուժերի
վերականգնմանն արգելք հանդիսացավ յե ամենից
ավելի պրոլետարիատին արյունաքամ արեց: Սրան
ավելացավ 1920 թվի անընթերցելիութունը, կերի պա-
կասությունը, անասնամահը, վոր էլ ավելի խանգարեց
արդյունաբերությունն ու փոխադրութեան միջոցները
վերականգնել՝ ազդելով, որինակ, գյուղացիների ձեռքով
մեր գլխավոր վառելիքը—փայտը հասցնելու վրա:

Իբրև հետևանք այս բոլորի՝ 1921 թվի գարնանը
քաղաքական հանգամանքներն այնպես դասավորվեցին,
վոր գյուղացիութեան դրությունը լավացնելու յե նրա
արտադրող ուժերն ավելացնելու համար շուտափույթ,
ամենավճռական, ամենից արտակարգ միջոցներն ան-
հետաձգելիորեն անհրաժեշտ դարձան:

Ինչու հենց գյուղացիների ու վոչ թե բանվորների:
Վորովհետև բանվորների վիճակը բարելավելու
համար հարկավոր են հաց ու վառելիք: Ամբողջ պե-
տական անտեսութեան տեսակետից այժմ ամենամեծ
«խանգարումը» սրանց պատճառով է առաջանում:
Իսկ հացահատիկի արտապրությունն ու հավաքելը,
վառելիք պատրաստելն ու տեղ հասցնելն այլ կերպ
հնարավոր չէ, բայց յեթե գույղացիութեան դրությունը
լավացնելով ու նրա արտադրող ուժերն ավելացնելով

միայն: Պետք է գյուղացիութունից սկսել: Ով այս չի հասկանում, ով հակում ունի գյուղացիներին առաջին տեղը դնելու խնդրում պրոլետարիայատի դիքտատուերայից «հրաժարվել» կամ հրաժարվելու նման մի բան նկատել, նա պարզապես չի թափանցում գործի մեջ յև իրեն հանձնում է Ֆրազի իշխանությանը: Պրոլետարիայատի դիքտատուերան պրոլետարիայատի ձեռքով քաղաքականութունը ղեկավարելն է: Պրոլետարիայատն իրեն ղեկավարող, տիրապետող դասակարգ պետք է կարողանա քաղաքականությանն այնպիսի ընթացք տալ, վոր առաջին հերթին լուծե ամենամահտաձգելի ամենից «ցավոտ» խնդիրը: Այժմ ամենից ավելի անհետաձգելի յեն այն միջոցները, վորոնք կարող են անմիջապես բարձրացնել գյուղացիական տնտեսութեան արտադրող ուժերը: Միայն այս նախապահով կարելի յե հասնել թե բանվորների դրությունը բարելավելուն յև թե բանվորների ու գյուղացիների դաշինքն ամրապնդելուն, պրոլետարիայատի դիքտատուերան ամրապնդելուն: Այն բանվորը կամ պրոլետարիայատի այն ներկայացուցիչը, վոր կցանկանար բանվորների դրությունը բարելավելուն դիմել վոչ այս նախապահով, գործնականում սպիտակ գվարդիայականների ու կապիտալիստների աջակից կհանդիսանար: Վորովհետև այս ճանապարհով չգնալ՝ նշանակում է բանվորների համբարային շահերը բարձր դասել նրա դասակարգային շահերից, նշանակում է բանվորի անմիջական բողոքական, մասնակի ոգտին զոհարելի ամբողջ բանվոր դասակարգի, նրա դիքտատուերայի շահերը, կավածատերերի ու կապիտալիստների դեմ գյուղացիների հետ կնքած նրա դաշինքի շահերը, կապիտալի լծից աշխատանքն ազատագրելու պայքարի մեջ նրա ունեցած ղեկավարող դերի շահերը:

Այսպես ուրեմն, առաջին հերթին հարկավոր են գյուղացիութեան արտադրող ուժերն ավելացնելու շուտապիտայթ ու լուրջ միջոցներ:

Այս բանը գլուխ բերել չի կարելի առանց պարենավորման քաղաքականության լուրջ փոփոխությունների: Այսպիսի մի փոփոխություն է պարենգրավումը (разверстка) պարենհարկով փոխարինելը, վորից բխում է հարկը վճարելուց հետո գոնե տեղական տնտեսական շրջանառության ասպարեզում առևտրին ազատություն տալը:

Պարենգրավումը պարենհարկով փոխարինելու էյությունն ի՞նչ է:

Այս մասին սխալ մտապատկերներ շատ են տարածված: Միայնունքը մեծ մասամբ այն բանից է առաջանում, վոր այս անցման իմաստի մեջ չեն թափանցում, հարց չեն տալիս իրանց, թե ինչից դեպի ինչն է տանում այս անցումը: Գործն այնպես են պատկերացնում, վոր իբրև թե ընդհանուր առմամբ վերցրած կոմունիզմից դեպի ընդհանուր առմամբ վերցրած բուրժուականությունն է անցում տեղի ունեցել: Այս սխալին ընդդեմ հարկավոր է անխուսափելի կերպով մատնանշել 1918 թ. մայիսին ասածներս:

Պարենհարկը ծայրահեղ կարիքից, քայքայումից ու պատերազմից առաջացած յուրահատուկ «ուղմական կոմունիզմից» դեպի կանոնավոր սոցիալիստական արդյունքափոխանակության անցնելու ձևերից մեկն է: Իսկ այս վերջինս, սոցիալիստական արդյունքափոխանակությունն յուր հերթին օգգաբնակության մեջ մանր գյուղացիության գերակշռությունից բխած առանձնահատկություններ ունեցող սոցիալիզմից դեպի կոմունիզմ անցնելու ձևերից մեկն է:

Յուրահատուկ «ուղմական կոմունիզմն» այն էր,

վոր մենք փաստորեն գյուղացիներէց առնում եյինք բոլոր ավելցուկներն յև յերբեմն եւ նույն իսկ վոչ թե ավելցուկները, այլ գյուղացու պարենավորման համար անհրաժեշտ մասը, առնում եյինք բանակի ու բանվորներին պահելու ծախսերը ծածկելու նպատակով: Առնում եյինք մեծ մասամբ իբրև պարտք՝ թղթադրամներ տալով: Այլապես մանր գյուղացիական քայքայված յերկրում կալվածատերերին ու կապիտալիստներին չեյինք կարող հաղթել: Յև այն փաստը, վոր մենք հաղթեցինք, (աշխարհիս ամենահզօր պետութիւններէ կողմից մեր շահագործողներին հասցրած ոժանդակութեան հակառակ) միշտայն այն չե ցուցց տալիս, թե բանվորներն ու գյուղացիներն իրանց ազատագրութեան համար մղած պայքարում հերոսութեան ինչ հրաշքներ կատարելու ընդունակ են: Այս փաստը ցուցց ե տալիս նայև այն, թե գործնականում մենշեկիներն, ես-երները, Կառուցիկն ու ընկերութիւնը բուրժուազիյայի սպասավորների ինչպիսի դեր եյին կատարում, յերբ այս «ազգական կոմունիզմը» մեր յերեսին շարտում եյին իբրեւ մեղադրանք: Այն ինչ այս պետք ե համարել մեր յերախտիքներից մեկը:

Բայց պակաս անհրաժեշտ չե իմանալ այս յերախտիքի իսկական չափը: «Ռազմական կոմունիզմը» պատերազմի ու քայքայման հարկազրանքի ծնունդերունա պրոլետարիյատի տնտեսական նպատակներին համապատասխանող քաղաքականութիւն չեր յև չեր ել կարող լինել: Այն մի ժամանակավոր միջոց եր: Մանր գյուղացիական երկրում յուր դիքատատուրան իրականացնող պրոլետարիյատի ուղիղ քաղաքականութիւնն այն կլինի, վոր նա գյուղացուն անհրաժեշտ արդունաբերական արդունքները հացի հետ փոխանակի: Միշտայն այսպիսի պարենավորման քաղաքականութիւնն

ե համապատասխանում պրոլետարիյատի նպատակներին, միշտայն այսպիսի քաղաքականութիւնն ե ընդունակ սոցիալիզմի հիմքերն ամրապնդելու յև նրա լիակատար հաղթանակի հասցնելու:

Պարենհարկն անցումն ե դեպի այս քաղաքականութիւնը: Մենք դեռ յևս այնքան քայքայված ենք, այնքան ճգնված պատերազմի ծանրութիւնից, (պատերազմ, վոր յերեկ գոյութիւն ուներ յև կարող ե վաղը բորբոքվել կապիտալիստների ագահութեան ու կատաղութեան շնորհիվ) վոր մեզ հարկավոր յեղած բոլոր հացի փոխարեն չենք կարող արդունաբերական արդունքներ տալ գյուղացուն: Այս իմանալով՝ մրտցնում ենք պարենհարկը, այսինքն բանակի ու բանվորների համար նվազագույն չափով անհրաժեշտ հացի քանակութիւնը ստանում ենք իբրև հարկ, իսկ մնացածը պիտի փոխանակենք արդունաբերութեան արդունքների հետ:

Սրա հետ միշտամանակ չպետք ե մոռանալ հետեյալն ել: Կարելքն ու քայքայումն այնքան մեծ են, վոր մենք չենք կարող միջանգամից վերականգնել խոշոր, գործարանային, սոցիալիստական արտադրութիւնը: Այս բանի համար խոշոր արդունաբերութեան կենտրոններում հացի ու վառելիքի մեծ պաշարներ են հարկավոր: Փորձով համոզվեցինք, վոր այս մի անգամից կատարել չի կարելի, յև դիտենք, վոր իմպերիյալիստական քայքայիչ պատերազմից հետո նույն իսկ ամենահարուստ ու ամենից առաջագեմ յերկիրները վորոշ, բավական յերկար տարիների ընթացքում միշտայն կկարողանան լուծել այս խնդիրը: Նշանակում ե՝ անհրաժեշտ ե վորոշ չափով նպաստել մտեր արդունաբերութեան վերականգնմանը, վորը չի պահանջում մեքենաներ, չի պահանջում հում նյութի, վառելիքի,

պարենավորման վնչ պետական ու վոչ ել խոշոր պաշարներ, վորը կարող ե գյուղացիական տնտեսութեանն իսկույն վորոշ ոգնութիւն հասցնել ու նրա արտադրող ուժերը բարձրացնել:

Ի՞նչ ե լինում հապա սրա հետեանքը:

Հետեանքը լինում ե այն, վոր առևտրի վորոշ (թեկուզ միշտայն տեղական) ազատութեան հիմքի վրա հաստատովելով վերածնվում են մանր բուրժուազիյան ու կապիտալիզմը: Այս անկասկածելի յե: Այս յերևույթի հանդեպ աչք փակելը ծիծաղելի յե:

Հարց ե ծագում. արդյոք անհրաժեշտ ե այս: Արդյոք կարելի յե այս արդարացնել: Արդյոք վտանգավոր չե՞ այս:

Նման հարցումներ շատ են տալիս, յե այս հարցումները մեծ մասամբ յերևան են հանում հարցնողների (մեղմ խոսքերով արտահայտած) պարզամտութիւնը միշտայն:

Նայեցեք այն բանին, թե 1918 թ. մայիսին յես ինչպիս եյի վորոշում մեր տնտեսութեան մեջ գոյութիւն ունեցող զանազան հասարակական—տնտեսական կերտվածքների ներկա տարրերը (բաղադրիչ մասերը): Վոչ վոքի չի հաջողվիլ հերքել, վոր մեզանում գոյութիւն ունեն այս բոլոր հինգ աստիճանները կամ այս բոլոր հինգ աստիճանների բաղադրիչ մասերը՝ նահապետականից (այսինքն կիսավայրենուց) սկսած մինչև սոցիալիստականը: Վոր մանր գյուղացիական յերկրում գերակշռում ե մանր գյուղացիական, այսինքն մասամբ նահապետական, մասամբ մանր բուրժուական «կերտվածքը», այս ինքն ըստ ինքեյան հասկանալի յե: Յեթե կա փոխանակութիւն, ապա մանր տնտեսութեան զարգացումը մանր բուրժուական զարգացում ե, կապիտալիստական զարգացում ե. այս անվիճելի

ճշմարտութիւնն ե, քաղաքատնտեսութեան այրքենական ճշմարտութիւնն, վոր հաստատվում ե նայե ամենորյա փորձով ու նույն իսկ կենվորի (ОБЫВАТЕЛЬ) դիտողութեամբ:

Այս տնտեսական իրականութեան հանդեպ ինչ քաղաքականութիւն կարող ե վարել սոցիալիստական պրոլետարիյատը:—Սոցիալիստական խոշոր գործարանի արտադրութեանից տալ մանր գյուղացուն՝ սրան հարկավոր բոլոր արդյունքները՝ հացահատիկի ու հում նյութի հետ փոխանակելով: Այս ամենացանկալի, ամենից «ուղիղ» քաղաքականութիւնը կլինել. մենք հենց այսպես ել սկսեցինք: Բայց մենք չենք կարող բոլոր արդյունքները տալ, հեռու յենք կարողանալուց յե շատ շուտով ել չենք կարող. համենայն դեպս մինչև այն ժամանակ չենք կարող, քանի դեռ չենք վերջացրել ամբողջ յերկրիելեքտրոֆիկացիյայի գոնե առաջին հերթի աշխատանքները:

Ինչպիս անենք:

Կամ պետք ե փորձենք արդելել, լիյովին կաշկանդել մասնավոր, վոչ պետական փոխանակութեան, այսինքն առևտրի, այսինքն կապիտալիզմի զարգացումը, վոր անխուսափելի յե միլիոնավոր մանր արտադրողների գոյութեան ժամանակ: Այսպիսի քաղաքականութիւնը հիմարութիւն կլինել յե ինքնասպանութիւն այն կուսակցութեան կողմից, վոր կփորձեր այս կատարել: Հիմարութիւն կլինել, վորովհետև այսպիսի մի քաղաքականութիւն տնտեսապես անհնարին բան ե. ինքնասպանութիւն կլինել, վորովհետև նման քաղաքականութիւն փորձող կուսակցութիւններն անխուսափելի կերպով խորտակվում են: Ի՞նչ մեղքներս թագցնենք. կոմունիստների մեջ կային մարդիկ, վորոնք «մտածմունքով, խոսքով ու գործով»

Ռ. Բ.

մեղաւորում ելին, հենց այսպիսի քաղաքականութեան մեջ ընկնելով: Աշխատենք այս սխալները մեր վրայից թոթափել: Անպայման հարկավոր է ձեռք վերցնել այս սխալներէրց, այլապես բոլորովին վատ կլինի:

Յև կամ (վերջին հնարավոր ու միջակ խելացի քաղաքականութեանը), պետք է չիորձենք արգելիլ կամ կաշկանդել կապիտալիզմի զարգացումը, այլ աշխատենք այն ուղղել պետական կապիտալիզմի հունի մեջ: Այս հնարավոր է տնտեսապես, վորովհետև պետական կապիտալիզմն այս կամ այն ձևով, այս կամ այն աստիճանով գոյութեան ունի ամեն տեղ, վորտեղ ազատ առևտրի ու ընդհանրապես կապիտալիզմի տարրեր կան:

Արդոք խորհրդային պետութեան, պրոլետարիատի դիքտատուրայի ու պետական կապիտալիզմի համադրումը, միյացումը, միյատեղ գոյութեանը հնարաւիթր բան է: Ի հարկե, հնարավոր է: Յես հենց այս էլի ապացուցում 1918 թ. մայիսին: Հույս ունեմ, վոր յես կարողացել եմ այս ապացուցել 1918 թ. մայիսին: Բացի սրանից, յես այն ժամանակ ապացուցել եմ, վոր մանր սեփականատիրական (թէ մանր նահապետական ու թե մանր բուրժուական) տարերքի հետ համեմատած՝ պետական կապիտալիզմը մի քայլ առաջադիմութեան է: Անհամար սխալներ են գործում, յերբ պետական կապիտալիզմը կողք կողքի յես դնում կամ համեմատում սոցիալիզմի հետ միյայն, այն ինչ ներկա քաղաքական-տնտեսական պայմաններում պետական կապիտալիզմը նայե մանր բուրժուական արտադրութեան հետ համեմատելը պարտադիր է:

Ինչպես տեսական, այնպես յև գործնական ամբողջ ինչիւրն այն է, վորպեսզի ուղիղ յեղանակներ գտնենք այն բանի համար, թե ինչպես պետք է կա-

պիտալիզմի (մինչև վորոշ աստիճան ու մինչև վորոշ ժամանակ) անխուսափելի զարգացումն ուղղենք պետական կապիտալիզմի հունի մեջ, ինչ պայմաններով շրջապատենք այս ուղղումը, ինչպես անենք, վոր պետական կապիտալիզմը մոտիկ ապագայում սոցիալիզմի փոխակերպվի:

Այս խնդրի լուծմանը մոտենալու համար ամենից առաջ պետք է ըստ կարելիութեան ավելի պարզ պատկերացնենք, թե մեր խորհրդային սիստեմի մեջ, մեր խորհրդային պետութեան շրջանակներում պետական կապիտալիզմն ինչ կլինի յև ինչ կարող է լինել գործնականում:

Թե խորհրդային իշխանութեանն ինչպես է ուղղում կապիտալիզմի զարգացումը պետական կապիտալիզմի հունի մեջ, թե նա ինչպես է «տնկում, պատվաստում» պետական կապիտալիզմ, սրա ամենապարզ դեպքը կամ որինակը կոնցեսիաներն են: Մեղաւորում հիմա ամենքն էլ համաձայն են, վոր կոնցեսիաներն անհրաժեշտ են, բայց բոլորը չեն խորհրդածում այն մասին, թե կոնցեսիաների նշանակութեանն ինչ է: Հասարակական-տնտեսական կերտվածքների տեսակետից կոնցեսիաներն ինչ են խորհրդային սիստեմի ժամանակ: Այս մի պայման, մի բրկ, մի դաշինք է, վոր խորհրդային, այսինքն պրոլետարական՝ պետական իշխանութեանը կնքում է պետական կապիտալիզմի հետ ընդդեմ մանր սեփականատիրական (նահապետական ու մանր բուրժուական) տարերքի: Կոնցեսիաները կապիտալիստ է: Նա գործը վարում է կապիտալիստորեն, վաստակի համար, նա համաձայնում է պրոլետարական իշխանութեան հետ պայման կնքել արտակարգ, արտասովոր վաստակի խաթեր ու կամ այնպիսի հում նյութ ստանալու

համար, վոր այլ կերպ ձեռք բերել անհնարին եր նրա համար յև կամ չափազանց դժվար: Խորհրդային իշխանության ոգուառ լինում ե այն, վոր իսկույն կամ ամենակարճ ժամանակում արտադրող ուժերը զարգանում են, արդյունքների քանակը մեծանում ե: Մենք, մենք ունենք հարյուր հատ այս ինչ գործանոցներ, հանքավայրեր, անտառամասեր: Մենք այս բոլորը մշակել չենք կարող. մեքենաներ, պարենավորում, փոխադրության միջոցներ չունենք: Խոշոր ձեռնարկությունների վատ ու անբավարար չափով արդյունքներ պատրաստելուց առաջանում ե մանր բուրժուական տարերքի ուժեղացումն յուր բոլոր հայտաբերումներով, շրջանի (հետո նայև ամբողջ յերկրի) գյուղացիական անտեսության թուլացումն, նրա արտադրող ուժերի ջլատումն, նրա՝ դեպի խորհրդային իշխանությունը տածած վստահության նվազումն, հափշտակություններ ու մասսայական, մանր (ամենավտանգավոր) սպեկուլյացիյա յև այլն: Կոնցեսիյաների ձևով պետական կապիտալիզմ անկելով՝ խորհրդային իշխանությունը ուժեղացնում ե խոշոր արտադրությունն ընդդեմ մանրի, հառաջադեմն ընդդեմ հետամնացի, մեքենականն ընդդեմ ձեռքով արտադրության, ավելացնում ե յուր ձեռքում յեղած խոշոր արդյունաբերական արդյունքները (արդյունքներից մաս հանելով վճարումն), պետականորեն կարգավորված անտեսական հարաբերությունները հզորացնում ե իբրև հակալիբ մանր բուրժուական, անիշխանական հարաբերությունների: Պատշաճ չափերով ու զգուշությամբ վարած կոնցեսիյոն քաղաքականությունն, անկասկած, կոչուե մեզ արտադրության վիճակը, բանվորների ու գյուղացիների դրությունն արագությամբ (մի վորոշ, փոքր աստիճան) բարելավելու, ք

հարկե վորոշ զոհաբերությունների դնով, ամենաթանգարժեք արդյունքներից տասնյակ ու տասնյակ փութ կապիտալիստին հանձնելու գնով: Ուժերի հարաբերությունից ե կախված յև այս ուժերի պայքարն ե վճռում այն չափերն ու այն պայմանները վորոշելը, վորոնց ժամանակ կոնցեսիյաները մեզ ձեռնտու յեն յև վտանգավոր չեն մեզ համար, վորովհետև կոնցեսիյան նույնպես կովի մի տեսակ ե, դասակարգային կովի շարունակությունն ուրիշ կերպարանքի տակ յև վոչ մի դեպքում նա դասակարգային կովը դասակարգերի համերաշխությամբ փոխարինել չի նշանակում: Կործնական կյանքը ցույց կտա կովի յեղանակները:

Խորհրդային սիստեմի մեջ պետական կապիտալիզմի ձևերի հետ համեմատած՝ կոնցեսիյաների ձևով պետական կապիտալիզմը, կարելի յև ստել, ամենահասարակ, ցայտուն, պարզ ու ճիշտ գծվածն ե: Մենք այս դեպքում ունինք մի ուղղակի ֆորմալ, զբաղոր պայման, վոր կնքում ենք Արևմտյան Յևրոպայի ամենակուլտուրական, առաջադեմ կապիտալիզմի հետ: Մենք ճիշտ գիտենք մեր ոգուտներն ու մեր կորուստները, մեր իրավունքներն ու մեր պարտականությունները, ճիշտ գիտենք այն պայմանաժամը, վորի ընթացքում տալիս ենք կոնցեսիյան, գիտենք պայմանաժամը լրանալուց առաջ հետգնման պայմանները, յեթե պայմանագիրը նախատեսում ե պայմանաժամից առաջ հետ գնելու իրավունքը: Մենք վորոշ «տուրք» ենք տալիս համաշխարհային կապիտալիզմին, «փրկանք ենք վճարում» նրան այս ու այն հարաբերությամբ՝ խորհրդային իշխանության դրությունն ամրապնդելու համար, մեր անտեսությունը վարելու պայմանների բարելավման համար՝ իսկույն վորոշ միջոց ձեռք բե-

բելով: Կոնցեսիյաների վերաբերմամբ խնդրի ամբողջ շփվարությունն այն է, վոր կոնցեսիյոն պայմանագիր կնքելու ժամանակ պետք է ամեն բան ծանր ու բարակ քննել ու կշռել, իսկ այնուհետև պետք է նրա կատարմանը հետևել: Այստեղ, անկասկած, զժվարություններ կան, յև սկզբում հաւանորեն անխուսափելի յեն սխալները, բայց կոնցեսիայի խնդրի շփվարություններն ամենաթեթև զժվարություններն են սոցիալական հեղափոխութեան մյուս խնդիրների հետ համեմատած, մասնավորապես պետական կապիտալիզմի զարգացումը թույլատրելու յև պատվաստելու մյուս ձևերի հետ համեմատած:

Կուսակցական ու խորհրդային բոլոր գործիչների ամենակարևոր խնդիրը, վոր պարենհարկը մտցնելու հետ կապ ունի, այն է, վոր նրանք կարողանան կոնցեսիյոն (այսինքն «կոնցեսիյոն» պետական կապիտալիզմի նմանությունն ունեցող) քաղաքականութեան եյական գաղափարները, սկզբունքները, հիմունքները կիրառել կապիտալիզմի, ազատ առևտրի, տեղական շրջանառութեան մյուս ձևերի վերաբերմամբ:

Վեր առնենք կոոպերացիյան: Ի զուր չեք, վոր պարենհարկի դեկրետը պատճառ յեղավ կոոպերացիյայի մասին յեղած որենքները վերաքննելու յև նրա ազատությունն ու իրավունքները վորոշ չափով լայնացնելու: Կոոպերացիյան էլ պետական կապիտալիզմի մի տեսակն է, միյայն ավելի քիչ պարզ, ավելի աղուս գծված, ավելի խճճված մի տեսակը, վոր գործնակա՞նում մեր իշխանութեան առաջ մեծ զժվարություններ է դնում: Ապրանք արտադրող մանր սեփականատերերի կոոպերացիյան (վորի մասին է խոսվում այստեղ, իբրև մանր գյուղացիական յերկրում գերիշխող ու տիպիկ ձևի մասին յև վոչ թե բանվորական կոոպերացիյայի

մասին) անխուսափելի կերպով առաջ է բերում մանր քուրժուական, կապիտալիստական հարաբերություններ, նպաստում է սրանց զարգացմանը, կապիտալիստիկներին դուրս է բերում առաջին շարքը, նրանց է տալիս ամենամեծ ոգուտը: Այս ուրիշ կերպ էլ չի կարող լինել, քանի վոր գոյություն ունի մանր աղաների դերակշռություն, այլ յև փոխանակութեան հնարավորություն ու անհրաժեշտություն: Ռուսաստանի ներկա պայմաններում կոոպերացիյայի ազատությունն ու իրավունքները կապիտալիզմի ազատություն ու իրավունքներ են նշանակում: Այս ակներև ճշմարտութեան հանդեպ աչք փակելը հիմարություն կամ հանցանք կլինի:

Իայց «կոոպերատիվ» կապիտալիզմը մասնատիրական կապիտալիզմից տարբերվելով խորհրդային իշխանութեան ժամանակ հանդես է գալիս իբրև պետական կապիտալիզմի մի այլ տեսակը յև իբրև այդպիսին այս բոպեյին նա մեզ ավելի շահավետ է ու ոգտակար, հասկանալի յև, վորոշ չափով: Վոր չափով պարենհարկը ֆնացածի (իբրև պարենհարկ չհավաքած մասի) վաճառման ազատություն է նշանակում, այն չափով մեզ անհրաժեշտ է ջանք գործադրել, վոր կոոպերատիվ կապիտալիզմի հունի մեջ ուղղենք կապիտալիզմի այս զարգացումը, վորովհետև վաճառելու ազատությունը, առևտրի ազատությունը կապիտալիզմի զարգացում է: Կոոպերատիվ կապիտալիզմը նման է պետականին այն կողմից, վոր հեշտացնում է հաշվառքը, վերահսկողությունը, հսկումը, պետութեան (այս դեպքում խորհրդային իշխանութեան) ու կապիտալիզմի միջև կնքած պայմանագրի հարաբերությունները: Կոոպերացիյան իբրև առևտրի ձև մասնավոր առևտրից ավելի շահավետ ու ոգտակար է մեզ վոչ միյայն մատ-

նանշածս պատճառներով, այլ յև նրա համար, վոր նա հեշտացում է միլյոնավոր ազգաբնակչության, հետո յևլ ամբողջ ազգաբնակչության կազմակերպումն ու միյացումը մինչև վերջին մարդը, իսկ այս հանգամանքն յուր հերթին վիթխարի առավելութուն է պետական կապիտալիզմից այսուհետև սոցիալիզմին անցնելու տեսակետից:

X Համեմատենք կոնցեսիաներն ու կոոպերացիաները պետական կապիտալիզմի ձևեր: Կոնցեսիայի պատվանդանը խոշոր, մեքենական արդյունաբերութունն է, կոոպերացիայինը՝ մանր, ձեռքի, մասամբ նայև նահապետական արտադրութունը: Կոնցեսիան յուրաքանչյուր առանձին կոնցեսիոն պայմանագրով վերաբերում է մի կապիտալիստի, մի ֆերմայի, մի սինդիկատի, բարեկի կամ արեստի: Կոոպերացիան ընդգրկում է բազմահազար, նույն իսկ միլյոնավոր մանր տնտեսատերեր: Կոնցեսիան թույլատրում է յև նույն իսկ լինթադրում ճիշտ պայմանագիր ու ճիշտ վորոշված ժամանակամիջոց: Կոոպերացիան չի թույլատրում վոչ ճիշտ պայմանագիր ու վոչ էլ բոլորովին ճիշտ վորոշված ժամանակամիջոց: Կոոպերացիայի մասին յեղած որենքը չեղյալ հայտարարելն ավելի հեշտ է, քան կոնցեսիայի պայմանագրերը վոչնչացնելը, սակայն պայմանագրերը վոչնչացնել՝ նշանակում է մի անգամից, հասարակ կերպով իսկույն վերացնել կապիտալիստի հետ կնքած տնտեսական դաշինքի կամ տնտեսական «կենսակցության» իրական հարաբերութունները, այն ինչ կոոպերատիվների մասին յեղած որենքի վոչ մի վերացում, վոչ մի որենք ընդհանրապես վոչ միայն չեն վոչնչացնել խորհրդային իշխանության ու մանր կապիտալիստիկների փաստորեն «կենսակցութունը», այլ յև ընդհանրապես չեն կարող

տնտեսական իրական հարաբերութունները վերացնել: Կոնցեսիոններին «հսկելը» հեշտ է, կոոպերատորներինը՝ զժվար: Կոնցեսիայից սոցիալիզմին անցնելը խոշոր արտադրության մի ձևից խոշոր արտադրության մի ուրիշ ձևին անցնել է: Մանր աղաների կոոպերացիայից սոցիալիզմին անցնելը մանր արտադրութունից խոշորին անցնել է, այսինքն մի անցում է, վոր ավելի բարդ է, քայց վորը սրա փոխարեն ընդունակ է հաջողության դեպքում ազգաբնակչության ավելի լայն մասսաներ ընդգրկելու, ընդունակ է հին նախասոցիալիստական, նույն իսկ նախակապիտալիստական ու ամեն «նորության» դիմադրելու տեսակետից ամենահամառ հարաբերութունների ավելի խոր ու ավելի կենսալի արմատները քանդելու յև հանելու: Կոնցեսիաների քաղաքականութունը հաջողության դեպքում մեզ կտա սակավաթիվ ու մերի հետ համեմատած՝ որինակելի խոշոր ձեռնարկութուններ, վորոնք կանգնած են ժամանակակից առաջադեմ կապիտալիզմի մակարդակի վրա. մի քանի տասնյակ տարիներից հետո այս ձեռնարկութուններն ամբողջովին կանցնեն մեր ձեռքը: Կոոպերատիվ քաղաքականութունը հաջողության դեպքում մեզ կտա այն, վոր մանր արտադրութունը կհզորանա, յև անորոշ ժամանակում կամավոր միյացման սկզբունքներով խոշոր արտադրության անցնելը կհեշտանա:

Առանքը կապիտալիզմի յերրորդ տեսակը: Պետութունը հրապուրում, գործի յև քաջում կապիտալիստին իբրև վաճառականի՝ պետական արդյունքները վաճառելու յև մանր արտադրողներից արդյունքներ գնելու համար՝ նրան վորոշ կոմիսիոն տուկոս վճարելով: Չորրորդ տեսակը. պետութունը ձեռնարկող կապիտալիստին կապալով է տալիս պետությանը պատ-

կանող արտադրական հիմնարկութիւնը, գործանոցը կամ անտառամասը, հողամասը յե այլն, վորի ժամանակ կապալի պայմանագրերն ամենից ալիլի կոնցեսիոն պայմանագրին ե նման: Պետական կապիտալիզմի այս վերջին յերկու տեսակների մասին մեզանում բոլորովին չեն խոսում, ամենևին չեն մտածում, իսկի չեն նկատում որանց: Բայց այս վոչ թե նրանից ե առաջանում, վոր մենք ուժեղ ու խելոք ենք յեղել, այլ նրանից, վոր թույլ ենք ու հիմար: Մենք վախենում ենք «ստոր ճշմարտութեան» յերեսին ուղղակի նայելուց յե չափազանց շատ ենք անձնատուր լինում «մեզ վսեմացնող խաբեյութեան» իշխանութեանը: Մեզ շարունակ մոլորեցնում ե այն, վոր «մենք» կապիտալիզմից անցնում էնք սոցիալիզմին՝ մոռանալով ճիշտ, պարզ պատկերացնել, թե ովքեր ենք «մենք»: Այս պարզ պատկերացումը չմոռանալու համար անհրաժեշտ ե աչքի առաջ ունենալ մեր հեկոնոմիկայի մեջ գոյութիւն ունեցող հասարակական անտեսութեան բոլոր—անպայման, առանց բացառութեան բոլոր—բազմազան կերտվածքների բազալընչ մասերի այն ցուցակը, վոր յես տվել եմ 1918 թ. մայիսի հոգվածումս: «Մենք», պրոլետարիյատի առաջապահներս, առաջամարտիկ զորախումբը, անմիջապես անցում ենք կատարում ղեպի սոցիալիզմ, բայց առաջապահ զորախումբը ամբողջ պրոլետարիյատի մի փոքրիկ մասն ե, իսկ պրոլետարիյատն յուր հերթին ազգաբնակչութեան ամբողջ մասսայի մի փոքրիկ մասն ե միյախ: Յե վորպեսզի «մենք» կարողանանք սոցիալիզմին անցնելու մեր ինդիերն հաջողութեամբ լուծել, սրա համար հարկավոր ե ըմբռնել, թե նախակապիտալիստական հարաբերութիւններից սոցիալիզմին անցնելու համար ինչ միջնորդական ճանապարհներ

յեղանակներ, միջոցներ ու հնարներ են հարկավոր Այս ե գլխավորը:

Նայեցեք Ռուս. Սոց. Ծեղ. Խորհրդ. Հանրապետութեան քարտեզին: Վոլոգդայից հուսիս, Դոնի Բոստովից հարավ—արեւելք, Որենբուրգից ու Ոմսկից հարավ, Տոմսկից հյուսիս ընկած են անծայրածիր տարածութեաններ, վորոնց վրա մի քանի տամայակ կուլտուրական վիթխարի պետութիւններ կտեղավորվելին: Այս բոլոր տարածութիւնների վրա նահապետականութիւնը, կիսավայրենութիւնն ու ամենախիսկական վայրենութիւնն ե թագավորում: Իսկ ֆուսցած ամբողջ Ռուսաստանի գյուղացիական խուլ անկուսնեբնում: Իսկ այն բոլոր վայրերում, վորտեղ գյուղերի միջև ընկած ու տամայակ վերստեր ձգվող տարածութիւնները, ավելի ճիշտ, տամայակ վերստեր ձգվող ճանապարհազուրկ տարածութիւնները բաժանում են գյուղն յերկաթուղուց, այսինքն քաղաքակրթութեան կապիտալիզմի, խոշոր արդյունաբերութեան, մեծ քաղաքի հետ ունենալիք կապից: Միթե այս բոլոր վայրերում չէն իշխում նմանապես նահապետականութիւնը, արլումովչինան, կիսավայրենութիւնը:

Կարելի յե արդոք յերևակայել, թե Ռուսաստանում տիրապետող այս դրութիւնից անմիջապես սոցիալիզմին անցնելն հնարավոր ե իրականացնել: Այն, վորոչ չափով կարելի յե յերևակայել, բայց միյախն մի պայմանով, վորի մասին այժմ մենք ճիշտ դիտենք շնորհիվ մի վիթխարի ու վախճանին հասցրած գիտական աշխատութեան: Այս պայմանը կլեքտրոֆիկացիան ե: Յեթե մենք մի քանի տամայակ բայոնական կլեքտրակայաններ շինենք (այժմ մենք դիտենք, թե վորտեղ յե ինչպես կարելի յե ու պետք ե շինել), յեթե այս տեղերից կլեքտրական ուժն անցկա-

ցնենք ամեն գյուղ, յեթե բավականաչափ ելիքորո-
մտորներ և այլ մեքենաներ ճարենք, այն ժամանակ
նահապետականությունից սոցիյալիզմին անցնելու հա-
մար միջին աստիճանների, միջնորդ ողակների կարիք
չի լինիլ կամ համարյա թե չի լինիլ: Բայց մենք շատ
լավ գիտենք, վոր այս «մի» պայմանը միմիայն աս-
տաղին հերթի աշխատանքների համար առնվազն տաս-
նյակ տարիներ և պահանջում, իսկ այս ժամանակա-
միջոցի կրճատումն յուր հերթին հնարավոր և միայն
այն դեպքում, յերբ պրոլետարական հեղափոխությունը
կհաղթանակե այնպիսի յերկիրներում, ինչպես են
Անգլիայն, Գերմանիայն, Ամերիկան:

Մտիկ տարիների համար պետք և կարողանանք
մտածել այն միջնորդ ողակների մասին, վորոնք կա-
րող են նահապետականությունից, մանր արտադրու-
թյունից սոցիյալիզմին անցնելը դյուրացնել: «Մեզ»
դեռ ելի հաճախ մոլորեցնում և այն դատողությունը,
թե «կապիտալիզմը չարիք և, սոցիյալիզմը՝ բարիք»: Բայց այս
դատողությունը սխալ և, վորովհետև մո-
ռանում և հասարակական տնտեսական կերտվածքների
ամբողջ գումարը՝ դուրս կորզելով սրանց միջից մի-
այն յերկուսը:

Կապիտալիզմը չարիք և սոցիյալիզմի հետ համե-
մատած: Կապիտալիզմը բարիք և միջնադարի հետ
համեմատած, մանր արտադրության հետ համեմատած,
մանր արտադրության փոշիացած վիճակից ծնունդ
առնող բյուրոկրատիայի հետ համեմատած: Վոր չափով
մենք ույժ չունենք մանր արտադրությունից անմի-
ջապես սոցիյալիզմին անցնելն իրականացնելու, այն
չափով կապիտալիզմն անհրաժեշտություն և, անհրա-
ժեշտություն և վորոչ չափով, իբրև մանր արտադրու-
թյան ու փոխանակության տարերային արդյունք, յե

այն չափով պետք և ոգտադրածենք կապիտալիզմը,
(առանձնապես այն ուղղելով պետական կապիտալիզմի
հունի մեջ) իբրև մանր արտադրության ու սոցիյալիզմի
միջև ընկնող միջնորդ ողակ, իբրև արտադրող ուժերը
բարձրացնելու միջոց, ճանապարհ, հնար, յեզանակ:

Առեք բյուրոկրատիզմի խնդիրն յև նայեցեք
նրան տնտեսական կողմից: 1918 թ. մայիսին մեր
տեսադաշտում բյուրոկրատիզմ չե յերևում: Հոկտեմ-
բերյան հեղափոխությունից կես տարի անց, այն ժա-
մանակվանից հետո, յերբ վերևից մինչև ներքև խոր-
տակել ենք հին բյուրոկրատական մեքենան, դեռ այս
չարիքը չենք զգում:

Անցնում և ելի մի տարի: Ռուս. Կոմ. Կուսա-
կցության VIII համագումարում, 1919 թ. մարտի 18-
23-ին, ընդունվում և կուսակցության նոր ծրագիրը,
յև մենք ուղղակի, առանց չարիքը խոստովանելուց
վախենալու, այլ կամենալով այն բանալ, մերկացնել,
նախատինքի սյունին դամել, ցանկանալով չարիքի
դեմ կովելու համար մտածմունք, կամք, յեռանդ, դոր-
ծողություն առաջ բերել, այս ծրագրում խոսում ենք
«խորհրդային թեխսնության ներսում բյուրոկրատիզմի
մտանակի վերածնության մասին»:

Անցավ ելի երկու տարի: Խորհուրդների VIII
համագումարից հետո, վոր 1920 թ. նոյեմբերին քննել
և բյուրոկրատիզմի խնդիրը, Ռուս. Կոմ. Կուսակցու-
թյան X համագումարից հետո, վոր 1921 թ. մարտին
բյուրոկրատիզմի վերլուծության հետ սերտ կապ ու-
նեցող վեճերն եր յեզրափակում, այժմ 1921 թ. զար-
նանը մենք այս չարիքն ել ավելի պարզ, ավելի վորոչ,
մեր առաջ ավելի սպառնադին կանգնած ենք տեսնում:
Վորինք են բյուրոկրատիզմի տնտեսական արմատ-
ները: Այս արմատները գլխավորապես յերկու տեսակ

են. մի կողմից զարգացած բուրժուազիյան հատկապես բանվորները (մասամբ յև դուրգացիները) հեղափոխական շարժման դեմ կարիք ունի բյուրոկրատական առաջին հերթին զինվորական, ապա դատաստանական և այլն, ապարատի: Մեղանում այս չկա: Մեր դատարանները դասակարգային են, բուրժուազիյայի դեմ ուղղված: Մեր բանակը դասակարգային է, բուրժուազիյայի հակառակ կանգնած: Բյուրոկրատիզմը բանակումը չէ, այլ նրա կարիքները բավարարելուն ծառայող հիմնարկությունների մեջ: Մեղանում բյուրոկրատիզմը անտեսական ուրիշ արմատ ունի, մանր արտադրողի ցիր ու ցան, փոշիացած վիճակը. նրա աղքատությունը, անկուլտուրականությունը, ճանապարհներից զուրկ լինելը, անգրագիտությունը, յերկրագործություն ու արդյունաբերության միջև լինելիք օրգանառուրյան բացակայությունը, սրանց միջև լինելիք կապի յև փոխազդեցություն բացակայությունը: Ամենամեծ մասամբ քաղաքացիական պատերազմի հետևանք է այս: Յերբ մեզ նավապաշարման ելին յինթարկել, շրջապատել ելին ամեն կողմից, կտրել ամբողջ աշխարհից, հետո կտրել հացավետ հարավից, Սիբիրից, քարածուխից, մենք չեյինք կարող արդյունաբերությունը վերականգնել: Մենք պարտավոր ելինք կանգ չառնելու «ուսումնական կոմունիզմի» առաջ, չվախենալու ամենահուսահատական ծայրահեղությունից, կիսաքաղց ու կիսաքաղցից ել ավելի վատթար դրություն կգիմանանք, բայց յև կպաշտպանենք, ինչ գնով ել լինի, նայած անուր քայքայմանն ու շրջանառության բացակայությունը, կպաշտպանենք բանվորա-դուրգացիական իշխանությունը: Յև մենք թույլ չտվինք, վոր մեզ վախեցնեն, ինչպես վախեցրին ես-երեսիրին ու մենչեիկներին, վորոնք

մեծ մասամբ սարսափից ու վախեցրած լինելուց գնում ելին փաստորեն բուրժուազիյայի հետևից): Բայց այն, վոր նավապաշարման յինթակա յերկրում, պաշարված բերդում հաղթություն պայման եր հանգիստանում, յուր բացասական կողմն յերևան հանց հենց ճիշտ 1921 թ. դարնանը, յերբ Ռուս. Սոց. Ծեդ. Սորհրդ. Հանրապետություն հողից վերջնականապես հալածվեցին սպիտակ զվարդիյականների գործքը: Պաշարված ամբոցում կարելի յև յև պետք է ամեն մի շրջանառություն «փականքի տակ դնել», մասսաների հատուկ հերոսություն ժամանակ այս կարելի յև տանել յերեք տարի շարունակ: Այս բանից հետո մանր արտադրողի քայքայումն ավելի ուժեղացավ, խոշոր արդյունաբերության վերականգնումն ավելի ձգձգվեց, հետաձգվեց: Բյուրոկրատիզմն իբրև «պաշարման» ժառանգություն, իբրև մանր արտադրող փոշիացած ու ճնշված վիճակի վերնաշենք, լիյովին յերևան յեկավ:

Պետք է կարողանանք չարիքն անվախ խոստովանել, վորպեսզի ավելի հաստատուն կովենք նրա դեմ, վորպեսզի կրկին սկսենք սկզբից:— դեռ յևս շատ անգամ մեզ հարկավոր է լինելու մեր շինարարության բոլոր ասպարեզներում կրկին սկզբից սկսել ու թերի թողածն ուղղելով, խնդրին մոտենալու գանազան ուղիներ ընտրել: Պարզվել է, վոր խոշոր արդյունաբերության վերականգնումն հետաձգվում է, պարզվել է, վոր արդյունաբերության ու յերկրագործության «փականքի տակ դրած» շրջանառությունն անհանդուրժելի յև այլևս.— այս նշանակում է, վոր պետք է ուժ թալ ավելի մատչելուն, այն է՝ մանր պետք է ուժ թալ ավելի մատչելուն: Գործին ոգնել այս կողմից, պատերազմի ու նավապաշարման հետևանքով կիսակործան շինության այս կողքին նեցուկ

դեմ տալ, ամեն կերպ, ինչ գնով ուզում ե լինի, շքր-
 ջանառությունը զարգացնել՝ առանց վախենալու կա-
 պիտալիզմից, վորովհետև սրա շքջանակները բավական
 նեղ են, բավական «չափավոր» են մեզանում (տնտե-
 սության մեջ կալվածատերերի ու կապիտալիստների
 եքսպլոպրիյացիայի միջոցով, քաղաքականության մեջ
 բանվորա-գյուղացիական իշխանության միջոցով) —
 այս ե պարենհարկի հիմնական միտքը, այս ե նրա
 տնտեսական նշանակությունը:

Կուսակցական ու խորհրդային բոլոր գործիչները
 պետք ե իրենց ամբողջ յեռանդը, ամբողջ ուշադրու-
 թյունն ուղղեն այն բանին, վորպեսզի տեղերում —
 նահանգներում, ել ավելի՝ գավառներում, ել ավելի
 շատ՝ գավառակներում ու գյուղերում թեկուզ «փոքրիկ»
 միջոցներով, վորք չափերով գյուղացիական տնտեսու-
 թյունը վերականգնելու, շքջակայքի մանր արդյունա-
 բերության զարգացմամբ նրան ոգնելու տեսակետից
 կատարելիք տնտեսական շինարարության գործում
 մեծ նախաձեռնություն առաջ բերեն ու կյանքի կոչեն:
 Համապետական միյասնական տնտեսական ծրագիրը
 (պլան) պահանջում ե, վոր այս լինի ուշադրության
 ու հոգսերի կենտրոնը, «հարվածային» աշխատանքների
 կենտրոնը: Այս ասպարիզում ձեռք բերած վորոշ բա-
 րելավումն ամենից ավելի յե մոտ «հիմքին», հասա-
 րակական կյանքի ամենալայնածավալ ու ամենախոր
 կողմին, այս բարելավումն հնարավոր կդարձնի ամե-
 նակարճ ժամանակամիջոցում դիմել ավելի յեռանդուն
 ու ավելի հաջող կերպով խոշոր արդյունաբերությունը
 վերականգնելուն:

Մինչև այժմ պարենավորման գործիչը մի հիմնա-
 կան պատվեր գիտեր. հավաքիլ պարենգրավման (раз-
 верстка) 100 0/0-ը: Այժմ պատվերն այլ ե. հավաքիլ

ամենակարճ ժամանակամիջոցում հարկի 100 0/0-ը,
 այնուհետև հավաքիլ ելի 100 0/0 խոշոր ու մանր ար-
 դյունաբերության արդյունքների հետ փոխանակելով:
 Ուլ հավաքի հարկի 75 0/0 ու 75 0/0 ել (յերկրորդ հար-
 յուրյակից) խոշոր ու մանր արդյունաբերության ար-
 դյունքների փոխանակելով, նա շատ ավելի ոգտավեո
 պետական գործ կկատարի, քան նա, վոր կհավաքե
 հարկի 100 0/0 ու 55 0/0 ել (յերկրորդ հարյուրյակից)
 փոխանակությամբ: Պարենավորման գործչի խնդիրք
 բարդանում ե. մի կողմից հարկառության խնդիր-
 ե այս. հավաքիլ հարկը, վորքան կարելի յե, արագ,
 վորքան կարելի յե, խելացի յեղանակով: Մյուս կողմից
 ընդհանուր տնտեսական խնդիր ե այս. աշխատիլ
 այնպիսի ընթացք տալ կոպերացիային, այնպես
 ոգնել մանր արդյունաբերությանը, այնպես զարգացնել
 նախաձեռնությունը, ձեռնարկությունը տեղերում,
 վոր մեծանա ու ամրապնդվի յերկրագործության ու
 արդյունաբերության շքջանառությունը: Մենք դեռ յեռ
 շատ ու շատ վատ ենք կարողանում այս բանն անել.
 ասպացույց՝ բյուրոկրատիզմը: Մենք պետք ե չվախե-
 նանք խոստովանելու, վոր այս խնդրում ռատ բան
 կաելի յե ու պետք ե սովորել կապիտալիստից: Հա-
 մեմատենք գործնական փորձի գումարներն ըստ նա-
 հանգների, ըստ գավառների, ըստ գավառակների, ըստ
 գյուղերի. մի տեղ մասնավոր կապիտալիստներն ու
 կապիտալիստիկները հասել են այսինչ արդյունքի:
 Նրանց վաստակը մոտավորապես այսքան ե: Այս մի
 տուրք ե, մի վճար, վոր տվել ենք «գիտության հա-
 մար»: Գիտության համար վճարելն ավստս չե, միյայն
 թե ուտումը կարգին գնա: Իսկ անա հարևան տեղում
 կոպերատիվ ճանապարհով հասել են այսինչ հետե-
 վանքի: Իսկ յերրորդ տեղում զուտ պետական, զուտ

կոմունիստական յեղանակով հասել ենք այս ինչ ար-
դյունքների (ներկայումս այս յերկրորդ պետքը բացա-
ռութուն կլինի) :

Նպատակն այն պետք է լինի, վոր գործադիր
կոմիտեյին կից յուրաքանչյուր շրջանային տնտեսական
կենտրոն, յուրաքանչյուր նահանգային տնտեսական
խորհրդակցութիւն, իբրև առաջին հերթի գործ, ան-
միջապես վորոշեր իսկույն կազմակերպել պարենհարկը
վճարելուց հետո փնայած ավելցուկների «շրջանառու-
թյան» դանազան տեսակի փորձեր ու սխտեմներ: Մի
քանի ամիս հետո պետք է ձեռքի տակ ունենալ գործ-
նական հետեանքներ համեմատելու յև ուսումնասիրելու
համար: Տեղական կամ թե ներմուծած ազ, կենտրոնից
ստացած նավթ, փայտ մշակելու տնայնագործական
արդյունաբերութիւն, տեղական հում նյութը գործա-
ծող արհեստ, վոր տալիս է մի քանի, թեկուզ վոչ շատ
ընտիր, բայց գյուղացուն անհրաժեշտ ու ոգտակար
արդյունքներ, «կանաչ ածուխ» (փոքրիկ նշանակու-
թիւն ունեցող տեղական ջրային ուժերի՝ ելեկտրո-
ֆիկացիայի համար ոգտագործումն) յև այլն, յև այլն,
այս բոլորը պետք է նետել գործի մեջ, ինչ գնով ուզում
է լինի, արդյունարեքութիւնն ու յերկրագործութիւն
շրջանառութիւնը կենդանացնելու համար: Ով այս
ասպարիզում ամենամեծ հետեանքների կհասնի՝ թեկուզ
մասնատիրական կապիտալիզմի միջոցով, թեկուզ նույն
իսկ առանց կոոպերացիայի, առանց այս կապիտա-
լիզմն ուղղակի պետական կապիտալիզմի փոխարկելու,
նա ավելի ոգուտ կտա համառուսական սոցիալիստա-
կան շինարարութիւն գործին, քան նա, վոր «կմտածե»
կոմունիզմի անարատութիւն մասին, պատվիրաններ,
կանոններ, հրահանգներ կզրի պետական կապիտալիզմի

ու կոոպերացիայի վերաբերյալ, բայց գործնականում
մատ չի կաշնիլ շրջանառութիւնը:

Այս կարող է պարագոքս թվալ, ինչպես, մաս-
նատիրական կապիտալիզմը սոցիալիզմին ոժանդա-
կողի դերում:

Բայց այս ամենին պարագոքս չէ, այլ տնտե-
սական տեսակետից միջանգամայն անհերքելի իրողու-
թիւն: Մի անգամ վոր գոյութիւն ունի մանր գյու-
ղացիական յերկիր, վորի փոխադրութիւն միջոցներն
առանձնապես քայքայված են, վորը նոր է պրծել պա-
տերազմից ու նախապաշարումից յև վորը քաղաքա-
կանապես ղեկավարվում է պրոլետարիատի ձեռքով,
իսկ սա, պրոլետարիատն, յուր ձեռքում է պահում
փոխադրութիւն միջոցներն ու խոշոր արդյունաբերու-
թիւնը, ապա այս նախադրայններից միջանգամայն
անխուսափելի կերպով բղխում է մի քան. այն, վոր
ներկա ըոպեյում առաջնակարգ նշանակութիւն ունի
նախ՝ տեղական շրջանառութիւնն յև յերկրորդ՝ գյու-
ղատնտեսական կապիտալիզմի միջոցով սոցիալիզմին
աջակցութիւն ցույց տալու հնարավորութիւնը (չենք
խոսում արդեն պետական կապիտալիզմի մասին):

Ավելի քիչ վիճենք բառերի մասին: Այս կողմից
մենք մինչև այժմ անչափ շատ ենք մեղանչել: Հար-
կավոր է ավելի բազմազանութիւն մտցնել գործնական
փորձի մեջ յև այս փորձը ավելի շատ ուսումնասիրել:
Լինում են այնպիսի պայմաններ, յերբ նույն իսկ
փոքրիկ մասշտաբով տարված տեղական աշխատանքն
որինակելի կերպով սարքի դնելն ավելի կարևոր պե-
տական նշանակութիւն ունի, քան կենտրոնական
պետական իշխանութիւն շատ ճյուղեր: Յև մեղանում
ճիշտ ներկա ըոպեյում գյուղացիական տնտեսութիւն
վերաբերմամբ ընդհանրապես ու գյուղատնտեսական

արտադրութեան ավելցուկներն արդյունաբերութեան արդյունքներէ հետ փոխանակելու վերաբերմամբ մասնավորապես պայմաններն հենց այնպես են, ինչպես ասացինք վերեւում: Այս ուղղութեամբ թեկուզ մի գաւառակի համար գործն որինակելիորեն սարքի դնելն ավելի խոշոր համապետական նշանակութիւն ունի, քան այս կամ այն ժողովրդական կոմիսարիատի կենտրոնական ապարատի «որինակելի» բարելավումը: Վորովհետեւ մեզանում յերեք ու կես տարվա ընթացքում կենտրոնական ապարատն այնքան է բարդացել, վոր կարողացել է վորոշ ծանրաշարժութիւն ձեռք բերել. այս ապարատը չենք կարող բավական արագ բարելավել, չգիտենք, թե ինչպես պիտի անել այս: Այս ապարատն արմատորեն բարելավելու համար, թաքմ ուժերի նոր հոսանք առաջացնելու համար, բյուրոկրատիզմի դեմ հաջողութեամբ կռիւնք համար, վնասակար ծանրաշարժութիւնն հաղթահարելու համար ոգնութիւնը պետք է գա տեղերից, ցածրերից, փոքրիկ «ամբողջութիւնը» որինակելի կերպով սարքի դնելուց, սակայն, ասում ենք, անպատճառ «ամբողջութիւնը», այսինքն վոչ թե մի տնտեսութիւնը, տնտեսութեան մի ճյուղը, վոչ թե մի ձեռնարկութիւնը, այլ թեկուզ մի փոքրիկ տեղի բոլոր տնտեսական հարաբերութիւններէ գումարը, ամբողջ տնտեսական շրջանառութեան գումարը սարքի դնելուց:

Մեզանից նրանք, վորոնք դատադարտված են կենտրոնական աշխատանքին կապված մտալու, կաշխատեն թեկուզ համեստ, անմիջապես մատչելի միջոցներով ապարատը բարելավելու յե բյուրոկրատիզմից այս մաքրելու: Սակայն այս տեսակետից գլխավոր ոգնութիւնը դալիս է ու կզա տեղերից: Մեզանում, վորքան յես կարողանում եմ դիտել, տեղերում

գործը ընդհանրապես ավելի լավ դրութեան մեջ է, քան կենտրոնում: յե այս էլ հասկանալի յե, վորովհետեւ բյուրոկրատիզմի չարիքը համախմբվում է կենտրոնում: Մոսկվան չի կարող այս տեսակետից հանրապետութեան ամենավատ քաղաքն ու ընդհանրապես ամենավատ «տեղը» չլինել: Տեղերում միջին հատկութիւնից դեպի յերկու կողմն էլ շեղումներ կան. դեպի վատ կողմն յեղած շեղումներն ավելի հազվադեպ են, քան դեպի լավ կողմն յեղած շեղումները: Դեպի վատ կողմն յեղած շեղումներն այն գեղծարարութիւններն են, վոր կատարում են կոմունիստներէ պոչին կզած հին չինովնիկները, կալվածատերերը, բուրժուաներն ու մյուս սրէկաները, վորոնք յերբեմն զգվելի անարգանքներ, անկարգութիւններ ու այլանդակութիւններ են կատարում գյուղացիութեան վերաբերմամբ: Այստեղ տեղորիստական մաքրումն է հարկավոր. տեղն ու տեղը գատաստան յե առանց այլևայլութեան դնդակահարութիւն: Թող Մարտովները, Չերնովներն ու սրանց նման անկուսակցական քաղքենիները ձեծեն իրենց կուրծքն յե ազադակին. «փառաբանում եմ, քեզ, Տեր, այն բանի համար, վոր յես նրանց նման չեմ յե չեմ ընդունում տեղոր»: Այդ պարտնները տեղոր չեն ընդունում, վորովհետեւ բանվորներին ու գյուղացիներին հիմարացնելու մատումնրանք սպիտակ գվարդիականներին լակելութիւն անող գործակիցների դերն են ընտրել իրենց համար: Ես-երներն ու մենշեիկները «տեղոր չեն ընդունում», վորովհետեւ նրանք մասսաներին «տոցիլայիլի» դրոշակի տակով սպիտակ գվարդիականների տնտրի տակ քաշելու դերն են կատարում: Այս ապացուցել է կերենակիականութիւնն ու կորնիլովականութիւնը Ռուսաստանում, կոլչակականութիւնը Սիբիրում, մենշեիկը վրաստանում, այս ապացուցել են

յերկրորդ ու «յերկուս ու կես» Ինտերնացիոնալների հերոսները Ֆինլանդիայում, Ունգարիայում, Աւստրիայում, Գերմանիայում, Իտալիայում, Անգլիայում և այլն: Թող Սպիտակ դվարդիական տեղորին լակեյուսթյուն անող գործակիցներն իրենց դովաբանեն վոչ մի տեղոր չընդունելու համար: Իսկ մենք կշարունակենք ասել ծանր, անկասկածելի ճշմարտությունը. այն յերկրներում, վորոնք 1914—1918 թվի իմպերիայլիտական պատերազմից հետո անլուր ճգնաժամ են կրում, վորտեղ հին կապերը քայքայված են, յև դասակարգային կռիվը սրված՝—իսկ այս դրության մեջ են յերկրագնդիս բոլոր աշխարհները—այն յերկրներում հակառակ կեղծավորների ու շողակրասների ասածների՝ առանց տեղորի գործ անել չի կարելի: Կամ ամերիկական, անգլիական (Իրլանդիայ), իտալական (Փաշիստներ), գերմանական, ունգարական ու այլ Փաստնի սպիտակ դվարդիական բուրժուական տեղոր, յև կամ կարմիր, պրոլետարական տեղոր: Միջին ճանապարհ չկայ, «յերրորդը» չկա յև չի յել կարող լինել:

Տեղերում գեպի լավ կողմն յեղած շեղումներն են, հաջողակ կռիվը բյուրոկրատիզմի դեմ, բանվորների ու գյուղացիների կարիքներին ամենամեծ ուշադրությամբ վերաբերվելը, տնտեսությունն հոգատարությամբ վտարի հանելը, արտադրական աշխատանքի բարձրացումը, յերկրագործության ու արդյունաբերության տեղական շրջանառության զարգացումը: Դեպի լավ կողմն յեղած այս շեղումները թիյև ավելի հաճախ են պատահում, քան դեպի վատ կողմն յեղած շեղումները, սակայն այնուամենայնիվ նրանք ել քիչ են պատահում: Սակայն նրանք կան: Քաղաքացիական պատերազմի ու զրկանքների մեջ թրծված, նոր, յե-

րիտասարդ կոմունիստական ուժեր պատրաստելու գործը տեղերում հաջողությամբ առաջ ե գնում: Մենք դեռ յևս շատ ու շատ քիչ բան ենք անում այս ուժերը սխտեմատիկ ու անշեղ կերպով ցածրից վերև տեղաշարժելու համար: Այս կարելի յև յև անհրաժեշտ ե անել ավելի ընդարձակ չափերով ու ավելի համառությամբ: Մի քանի գործիչների կարելի յև յև պետք ե պոկել կենտրոնական աշխատանքից յև տեղական աշխատանքի վրա կանգնեցնել. իբրև գավառների և գավառակների ղեկավարներ նրանք այնտեղ բոլոր տրնտեսական կյանքն ամբողջությամբ վերցրած որինակելի կերպով սարքի գնելով, հսկայական ոգուտ կտան յև վորևե կենտրոնական ֆունկցիայից ավելի կարևոր համապետական դեր կկատարեն: Վորովհետև որինակելի կերպով սարքի գրած գործը կլինի գործիչների մի տնկարան ու նմանվելու մի որինակ, վորն ընդորինակելն համեմատաբար հեշտ կլինի, իսկ մենք կենտրոնից կկարողանանք նպաստել այն բանին, վոր որինակելի որինակ «ընդորինակելու գործն» ամեն տեղ լայն չափերով տարածվի ու պարտադիր դառնա:

Յերկրագործության ու արդյունաբերության միջև ի հաշիվ պարենհարկը վճարելուց հետո մնացած ավելցուկների ու ի հաշիվ մանր, առավելապես տնայնագործական արդյունաբերության կատարվող «շրջանառության» զարգացման համար պահանջվում ե տեղերի՝ յուր էյությամբ ինքնուրույն, բանիմաց, խելոք նախաձեռնուրյուն, այս պատճառով ել գավառային ու գավառակային աշխատանքի որինակելիյորեն կարգավորելը ներկայումս համապետական տեսակետից միջանդամայն բացառիկ կարևորություն ե ստանում:

Որինակ, գինվորական գործում վերջին լեհական պատերազմի ժամանակ մենք չվախեցանք հին, բյու-

ընկրանտական յերարխիայից շեղվելուց, չվախեցանք
 «աստիճան ցածրացնելուց, չվախեցանք Հանրապետու-
 թյան Հեղափոխական Ռազմական Խորհրդի անդամ-
 ներին (այս բարձր պաշտոնում պահելով հանդերձ)՝
 ցածր տեղեր փոխադրելուց: Իսկ այժմ ինչո՞ւ Համա-
 ուսական Կենտր. Գործ. Կոմիտեյի անդամներին կամ
 ուրիշ կոլեգիայաների անդամներին կամ ուրիշ բարձրաս-
 տիճան ընկերները չփոխադրենք նույն իսկ գավառա-
 յին, նույն իսկ գավառակային աշխատանքների գլուխ:
 Մենք հո այնքան «բյուրոկրատական չենք դարձել»
 իրօք, վոր այսպիսի բաներից «քաշվենք»: Յև մեզանում
 տասնյակ կենտրոնական գործիչներ կգտնվեն, վորոնք
 հոժարութեամբ ընդառաջ կգնան այս գործին: Իսկ ամ-
 բողջ Հանրապետութեան տնտեսական շինարարութեան
 դործը չափազանց կշահվի սրանից, յև որինակելի գա-
 վառականներն յև որինակելի գավառները վոչ միայն
 խոշոր, այլ ուղղակի վճռող, պատմական դեր կխաղան:

Ի միջի այլոց: Իբրև փոքրիկ, բայց այնուամե-
 նայնիվ նշանակութուն ունեցող հանդամանք պետք
 է յժառանանշել, վոր սպեկուլյացիայի դեմ կռվելու խնդիրը
 դնելիս անհրաժեշտ է սկզբունքային փոփոխութեան
 յենթարկել այն: «Կանոնավոր» առևտուրը, վոր չի
 խուսափում պետական վերահսկողութունից, պետք է
 վայելե մեր ոժանդակութունը, մեզ ձեռնտու յե այն
 զարգացնել: Իսկ սպեկուլյացիայն ջի կարելի տարբերեք
 «կանոնավոր» առևտրից, յեթե սպեկուլյացիայն քաղա-
 քատնտեսական տեսակետից հասկանանք: Առևտրի ազա-
 տութունը կապիտալիզմ է, կապիտալիզմն սպեկուլյա-
 ցիայի. այս բանի առաջ աչք փակելը ծիծաղելի յե:

Ի՞նչ անենք: Հայտարարենք, վոր սպեկուլյացիայն
 անդատվի կմնա:

Վճչ: Հարկավոր է վերաբնենել ու վերամշակել

Մեզանում հարյուրավոր ու հազարավոր անկուսակցա-
 կաններ են աշխատում, վորոնցից տասնյակները ամե-
 նակարևոր ու պատասխանատու պաշտոններում: Պետք
 է սրանց աշխատանքն ավելի վերաստուգել: Պետք
 նոր վերաստուգման համար ավելի շատ ասպարեզ
 քաշել հազարավոր ու հազարավոր շարքային աշխատա-
 վորներին, փորձել սրանց, սխտեմատիկ ու անշեղ
 կերպով, հարյուրավորներով շարժել նրանց դեպի բարձր
 պաշտոնները՝ փորձով վերաստուգելու հիմունքով:
 Մեզանում կոմունիստները մինչև այժմ լավ չեն կա-
 րողանում հասկանալ իրանց՝ կառավարելու իսկական
 խնդիրը. նրանք պետք է վոչ թե աշխատեն՝ «ամեն
 բան» «իրանք» կատարեն՝ ուժից ընկնելով ու գործը
 չհասցնելով, 20 գործ հանձն առնելով ու վոչ մեկը չվեր-
 ջացնելով, այլ վերաստուգեն տասնյակ ու հարյու-
 րավոր ոգնականների աշխատանքը, հարմարութուն
 ստեղծեն այն բանի համար, վոր ներքևից, այսինքն
 իսկական մասսան վերաստուգե սրանց կառավարած
 աշխատանքները. կոմունիստները պետք է ազդու քլուեն
 տան աշխատանքին յև սովորեն այն մարդկանցից,
 վորոնք գիտութուն ունին (սպեցներ) ու խոշոր տըն-
 տեսութունը կարգի բերելու փորձ (կապիտալիստներ):
 Խելքը կոմունիստը չի վախենում ուղղմացից բան
 սովորելու, թեյև ուղղմացների 9/10-ը ընդունակ է
 ամեն մի դեպքում դավաճանելու: Խելքը կոմունիստը
 չի վախենալ կապիտալիստից ել բան սովորելուց (ար-
 դյոք այս կապիտալիստը խոշոր կոմիսիյոններ—կա-
 պիտալիստ կլինի, թե առևտրական կոմիսիյոններ, թե
 մանր կապիտալիստիկ—կոուպերատոր յև այլն, այս
 միջևոյն է), թեյև կապիտալիստը ուղղմացից լավ
 չե: Սովորեցինք կարմիր բանակում բռնել գավաճան
 ուսմացիներին, ջոկել ազնիվներին ու բարեխիղճնե-
 րին, ընդհանրապես ու ամբողջութեամբ վերցրած՝
 ոգտագործել հազարավոր ու տասնյակ հազարավոր
 ուղղմացիներին: Սովորում ենք նույնն անել (յու-

բանատուկ յեղանակով) ճարտարագետները յև ուսուցիչները վերաբերմամբ, թեյև այս անում ենք շատ ավելի վատ, քան կարմիր բանակում. (այնտեղ Ինիկինն ու Կոլչակը մեզ լավ ելին շտապեցնում, հարկադրում ելին ավելի արագ, յեռանդով ու ավելի կարգին սովորել): Սովորենք կատարել նույնը (ղարձայլ յուրահատուկ կերպարանքով) կոմիսիոներ—առևտրականի վերաբերմամբ, պետութայն համար գնումներ կատարողների վերաբերմամբ, կոտպերատոր—կապիտալիստների վերաբերմամբ, կոնցեսիոներ—ձեռնարկողի վերաբերմամբ:

Բանվոր ու գյուղացի մասսային հարկավոր ե իր վիճակի անմիջական բարելավումն: Նոր ուժերն ոգտակար աշխատանքի դնելով մենք կհասնենք այս նպատակին: Պարենհարկն ու նրա հետ կապված մի շարք միջոցներ կոգնեն այս բանին: Սրանով մենք մանր արտադրողների անխուսափելի տատանումների անտեսական արմատը տակից կկտրենք: Իսկ Միլյուկովին նպաստավոր քաղաքական տատանումների դեմ կկռվենք անխնայ: Տատանվողները շատ են: Մենք քիչ ենք: Տատանվողները բաժան բաժան են: Մենք միլյացած ենք: Տատանվողները անտեսապես ինքնուրույն չեն: Պրոլետարիայտը անտեսապես ինքնանկախ ե: Տատանվողները չգիտեն՝ ինչ են ուզում. համ ուզում են, համ ծածկվում, համ ել Միլյուկովը չի հրամայում: Իսկ մենք գիտենք՝ ինչ ենք ուզում:

Յև այս պատճառով ել մենք կհաղթենք:

Յեզրափակումն

Ամփոփենք:

Պարենհարկը մի անցում ե ուղմական կոմունիզմից դեպի ուղիղ սոցիալիստական արդյունքափոխանակությունը:

Եայրահեղ քայքայումը, վոր ավելի սրվեց 1920 թվի անբերրիության հետևանքով, անհետաձգելիորեն

սպեկուլյացիայի մասին յեղած բոլոր որենքները, պատժելի հայտարարել (իրապես առաջվանից յերեք անգամ ավելի խիստ հետապնդելով) ամեն մի հափըտակություն ու ամեն մի ուղղակի կամ անուղղակի, քացահայտ կամ ծպտյալ շեղում պետական վերահսկողությունից, հսկողությունից, հաշվառմից: Ժողովմների Սորբըղում արդեն սկսված ե աշխատանք, այսինքն ժողովմների Սորհուրդն արդեն հրահանգել ե սպեկուլյացիայի մասին յեղած որենքները վերաքննելու աշխատանքն սկսել: Սնդիրն հենց այսպես գնելով մենք կհասնենք այն բանին, վոր կապիտալիզմի անխուսափելի ու վորոշ չափով մեզ անհրաժեշտ զարգացումը կուղղենք պետական կապիտալիզմի հունի մեջ:

Վաղափական ամփոփումներ ու յեզրակացություններ.

Ինձ դեռ մնացել ե նայել շոշափել, թեկուզ համառոտ, քաղաքական նույն պայմանների դասավորությունը, ինչպես վոր այն կազմել ու փոփոխության ե յենթարկվի վերևում զժածա անտեսության հետ միյասին:

Սրդեն չսացի, վոր 1921 թվին մեր անտեսության հիմնական մասերը նույն էլին, ինչ վոր կային 1918 թվին: 1921 թվին զլիավորապես անբերրիութեան ե անասնամահի շնորհիվ չափազանց վատթարացավ գյուղացիության զրությունը, վոր առանց այս ել պատերազմի ու նավապաշարման հետևանքով չափազանց ծանր եր: Այս վատթարանալու հետևանքն յեղան քաղաքական տատանումները, վորոնք, ընդհանրապես առած, մանր արտադրողի բուն զբնույթն են կաղճում: Այս տատանումների ամենացայտուն արտահատությունը կրոնշտատի թուովությունն եր:

Կրօնշտատի դեպքերի մեջ ամենից ընտրողը հենց այս մանր բուժուական տարերքի տատանումներն էյին: Լիյովին ձևակերպված, պարզ, վորոշ բան շատ քիչ կա: «Ազատութեան», «առևտրի ազատութեան», «ճորտութեանից ազատագրելու» «առանց բոլշևիկներէն թորհուրդներ» ունենալու կամ խորհուրդներէ վերջնաբերութեան, կամ «կուսակցութեան դիքատատուրայից» ազատվելու յե այլն յե այլն ու սրանց նման մշուշապատ նշանաբաններ: Թե մենշևիկներն ու ես—երներն հայտարարում են, վոր Կրօնշտատի շարժումն «իրանցն» է: Վիկտոր Չերնովը սուրհանդակ է ուղարկում Կրօնշտատ, այս սուրհանդակի առաջարկով մենշևիկ Վալիլը Կրօնշտատում քվիարկում է Սահմանադրի ոգտին: Ամբողջ սպիտակ գվարդիականութունը բողոքապես զորահավաքի յե յենթարկվում Կրօնուտարի համար կարելի յե ասել, բաղիյո—հեռագրական արագութեամբ: Կրօնշտատի սպիտակ գվարդիական զինվորական սպեցները (ВОЕННЫЕ—զինվորական մասնագետներն) ու մի շարք մասնագետներ, յե վոչ թե միայն Կազլովսկին, ծովով Որենբուրգ զորք հանելու ծրագիր են մշակում, մի ծրագիր, վոր ես—երական—մենշևիկական անկուսակցական մասսային վախեցնում է: Արտասահմանի 50—ից ավելի ռուսական սպիտակ գվարդիական լրագրերը կատաղի յեռանդով պայքար են մղում Կրօնուտարի համար: Խոշոր բանկերը, Ֆինանսական կապիտալի բոլոր ուժերը հանդանակութուն են սկսում Կրօնշտատին ոգնելու համար: Բուրժուազիայի յե կալվածատերերի խելոք պարագուլը, կազետ Միլյուկովը տխմար Վիկտոր Չերնովին ուղղակի, (իսկ Պիտերի բանտում նստած մենշևիկ Իանին և մենշևիկ Րաժկովին կողմնակի կերպով) բացատրում է, վոր Սահմանադրի նշանաբանով շտապելու վոչ մի կարելի չկա, վոր կարելի յե յեվ պեժ է արտահայտել խորհրդային իսխանուրյան ոգտուրյան ոգտին, միայն քե առանց բոլշևիկների:

Ի հարկե դժվար բան չե ավելի խելոք լինել, քան այնպիսի ինքնասիրահար տխմարներ, վորպիսին Չերնովն է, մանր բուրժուական Ֆրազի հերոսը, յե կամ վորպիսին Մարտովն է, «մարքսիզմի» կեղծ նմանութունը տված քաղքենիցական բեֆորմիզմի ասպետը: Իսկապես խնդիրն այն չե, վոր Միլյուկովն իբրև անհատ ավելի խելոք է, այլ այն, վոր յուր դասակարգային դրութեան շնորհիվ խոշոր բուրժուազիայի կուսակցական պարագուլին ավելի պարզ է տեսնում, ավելի լավ է հասկնում գործի դասակարգային եյութունը, քան մանր բուրժուազիայի պարագուլները, Չերնովներն ու Մարտովները: Վորովհետև բուրժուազիան իրոք մի դասակարգային ուլժ է, վոր կապիտալիզմի ժամանակ անխուսափելի կերպով իշխում է թե միջապետութեան մեջ ու թե աշխարհիս յերեսին յեղած ամենադեմոկրատական հանրապետութեան մեջ: Նույնպես անխուսափելի կերպով ոգտվելով համաշխարհային բուրժուազիայի ոժանդակութունից, Իսկ մանր բուրժուազիան, այսինքն յերկրորդ ու «յերկուս ու կես» Ինտերնացիոնալի բոլոր հերոսները խնդրի անտեսական եյութեան շնորհիվ ուրիշ բան չեն կարող լինել, քան դասակարգային անզորութեան արտահայտութուններ. —այստեղից են ծագում տատանումները, Ֆրագան, անողնականութունը: 1789 թվին մանր բուրժուաները դեռ կարող էյին մեծ հեղափոխականներ լինել, 1848 թվին նրանք ծիծաղելի ու վողորմելի էյին, 1917—1921 թվերին նրանք իրանց դերով բեյակցիայի զգվելի գործակիցներն են, ուղղակի նրա լակեյները, Չերնովներ են կոչվում նրանք, թե Կառուցիկներ, Մակոնալդներ յե այլն, այս միյենույն է:

Յերբ Բերլինում հրատարակվող յուր հանդեսում Մարտովն հայտարարում է, վոր իբրև թե Կրօն-

շտատը վոչ միջայն մենշեիկների նշանաբաններն եր առաջ քանուամ, այլ յև ավացուցեց, թե հնարավոր և հակաբուշեիկաբան մի շարժում, վոր ամբողջովին չի ծանայում սպիտակ գվարդիյականութեանը, ապա ինքնասիրահար քաղքենիյական Նարկիսի պատկերն և հենց այս Յեկեք պարզապես չտեսնելու տանը այն իրողութեանը, վոր իսկապես սպիտակ գվարդիյականները վողջուում էյին կրոնշտատցիներին յև կրոնշտատին ոգնելու համար բանկերի միջոցով ֆոնդեր էյին հավաքում: Միլլուկոմի արգարացի յև Չերնոֆեերի ու Մարտոֆեերի հանգեպ, վորովհետև իսկական սպիտակ գվարդիյական ուժի, կապիտալիստների ու կալվածատերերի ուժի իսկական տակտիկան և տալիս, յեկեք ոժանգակենք, ումն ուզում և լինի, ինչ խորհրդային իշխանութեանը ուզում և լինի, միջան քե տապալենք բուշեիկներին, միջայն քե իրականացնենք իշխանութեանը տեղաբարձ անելը: Բոլորովին միջևնույն և՛ ղեպի աջ, թե՛ ղեպի ձախ, մենշեիկների կողմը, թե անարխիստների, միջայն թե իշխանութեանը տեղաբարձ անենք բուշեիկներից ղենը. իսկ մնացածը.— մնացածը «մենք», Միլլուկոմիերս, «մենք», կապիտալիստներս ու կալվածատերերս «ինքներս» կանենք, անարխիստիկներին, Չերնոֆեերին, Մարտոֆեերին, թաթալոշներ տալով կըշենք. ինչպես Միբիրում արինք Չերնոֆեերի ու Մայսիկիների վերավերմամբ, ինչպես Ունգարիյայում արինք ունգարական Չերնոֆեերի ու Մարտոֆեերի վերաբերմամբ, ինչպես Գերմանիյայում արինք կաուցիու վերաբերմամբ, ինչպես Վիյեննայում արինք Փր. Ազկերների ու ընկերութեան վերաբերմամբ: Բոլոր յեղկրներում, բոլոր հեղափոխութեանների ժամանակ իսկական, գործ անող բուրժուազիյան այս քաղքենիյական նարկիսներին, մենշեիկներին, ես-երնեերին, անկուսակցականներին հարչուբներով և հիմարացրել ու վոնդել: Այս ստուգված և փաստերով Նարկիսները շտատիստութեան կանեն: Միլլուկոմիերս ու սպիտակ գվարդիյականները գործ կկատարեն:

«Միջայն թե իշխանութեանը բուշեիկներից ղենը տեղաբարձ լիներ, բոլորովին միջևնույն և, մի քիչ ղեպի աջ, թե՛ ղեպի ձախ. իսկ մնացածը կարգի կընկնի»: այս խնդրում Միլլուկոմի միջանդամայն իրավացի յև: Այս մի դասակարգային ճշմարտութեան և, վոր միջնադարից հետո նոր պատմութեան բազմադարյան ժամանակաշրջանի բոլոր յեղկրների հեղափոխութեանների ամբողջ պատմութեանն և հաստատել: Փոշիյացած վիճակում գտնվող մանր արտադրողին, զյուղացուն կամ բուրժուազիյան և միջայրել տնտեսապես ու բաղաճականապես (կապիտալիզմի ժամանակ բոլոր յեղկրներում, նոր դարերի բոլոր հեղափոխութեանների ընթացքում այսպես և յեղել միշտ. կապիտալիզմի ժամանակ հենց միշտ էլ այսպես կլինի) յև կամ պրոլետարիյատը. (այսպես և յեղել սաղմնային կերպարանքով ամենակարճ ժամանակամիջոցում նոր դարերի ամենամեծ հեղափոխութեանների ամենաբարձր դարգացման բույսին, այսպես յեղավ 1917—1921 թվերին Ռուսաստանում դարգացած կերպարանքով): «Յերբորդ» ճանապարհի մասին, «յերբորդ ուժի» մասին շողակրատել ու յերազել կարող են ինքնասիրահար նարկիսները միջայն:

Մեծազույն դժվարութեամբ, հուսահատական կովի մեջ բուշեիկները պատրաստեցին պրոլետարիյատի՝ կառավարելու բնդունակ մի առաջապահ գունդ, ստեղծեցին ու պահեցին, պաշտպանեցին պրոլետարիյատի ղիքտատուբան, յև չորս տարվա գործնական կյանքից հետո, փորձով ստուգելուց հետո Ռուսաստանում դասակարգային ուժերի հարաբերութեանը պարզից էլ պարզ դարձավ: Միյակ հեղափոխական դասակարգի պողպատյա ու թրձված մի առաջապահ գունդ, մի մանր բուրժուական տատանվող աարերք յև համաշխարհային բուրժուազիյայի ոժանդակութեանը վայելող ու արտասահմանում տափ կացած Միլլուկոմի-

ներ, կապիտալիստներ, կալվածատերեր: Խնդիրը պարզից ել պարզ ե: «Իշխանութեան վորև ե տեղաշարժութեան» միայն վերջինները կարող են ոգտադրծել:

1918 թ. վերոհիշյալ բրոշյուրում այս մասին ուղղակի ասել ենք. «գլխավոր թշնամին» «մանր բուրժուական տարերքն ե»: «Կամ մինք նրան կենթարկենք մեր վերահսկողութեանն ու հաշվառքին, յև կամ նա անխուսափելի ու անսրբուն կերպով կտապալե բանվորական իշխանութեանն, ինչպես տապալեցին հեղափոխութեանները նապոլյոններն ու կավենյակները, վորոնք աճում, գորանում ելին հենց այս մանր բուրժուական հողաշերտի վրա: Այսպես ե դրված խնդիրը: Միայն այսպես ե դրված խնդիրը»: (1918 թ. բրոշյուրից. Հմմտ. վերևը):

Մեր ուշքը գոյութեան ունեցող, թե ուսական ու թե միջազգային, բոլոր դասակարգային մեծութեանները պարզ ու զգաստ հաշվառքի յենթարկելն ե յև հետո յև սրանից բղխող յերկաթյա յեռանդը, ամբութեանը, կովի վճռականութեանն ու անձնուրացութեանը: Թշնամիներ շատ ունինք, բայց նրանք բաժան բաժան են կամ չգիտեն, թե ինչ են ուզում (ինչպես բոլոր մանր բուրժուաները, բոլոր Մարտովներն ու Չերտոզները), բոլոր անկուսակցականներն ու անիշխանականները: Իսկ մենք միայցած ենք իրար հետ՝ անմիջապես, բոլոր յերկիրների պրոլետարների հետ, կողմնակի կերպով. մենք գիտենք, թե ինչ ենք ուզում: Յև այս պատճառով ել մենք անպարտելի յինք համաշխարհային մասշտաբով, թեյև այս ամեննին չե բացասում այս կամ այն ժամանակի ընթացքում առանձին պրոլետարական հեղափոխութեանների պարտութեան հնարավորութեանը:

Իզուր չե, վոր մանր բուրժուական տարերքը տարերք ե կոչվում, վորովհետև այս ամենից ավելի անձև, անորոշ, անգիտակից մի բան ե իրոք: Մանր

բուրժուազիայի նարկիսաները կարծում են, վոր «ընդհանուր ձայնատվութեանը» կապիտալիստների ժամանակ վնչնչացնում ե մանր արտադրողի բնույթը, մինչդեռ իրոք այս ձայնատվութեանն ոգնում ե բուրժուազիային յեկեղեցու, մամուլի, ուսուցչութեան, վոստիկանութեան, գինվորականութեան, հազար տեսակի անտեսական ճնշման միջոցով, ոգնում ե բուրժուազիային՝ փոշիացած մանր արտադրողներին յեկարկելու իրեն: Քայքայումը, կարիքն ու դրութեան ծանրութեանը տատանումներ են առաջ բերում. այսոք բուրժուազիայի, վազը պրոլետարիատի կողմը: Միմիայն պրոլետարիատի առաջապահ գունդն ե ընդունակ տատանումների չենթարկվելու յև տատանումներին դեմ կանգնելու:

1921 թ. դեպքերը կրկին ու կրկին անգամ ցույց տվին ես-երների ու մենշեիկների դերը. նրանք ոգնում են տատանվող մանր բուրժուական տարերքին՝ բողբոջներից ընկրկելու, «իշխանութեան տեղաշարժումն կատարելու» յողոտ կապիտալիստների ու կալվածատերերի: Մեկեկիկներն ու ես-երները այժմ սովորել են անկուսակցականների գույն ընդունել: Այս ապացուցված ե լիյովին: Յև միայն տիմարները կարող են այս շտեսնել. չհասկանալ, վոր մենք չենք կարող թույլ տալ, վոր մեզ հիմարացնեն: Անկուսակցական կոնֆերանսները կուռքեր չեն: Նրանք դեմ հատելի յեն, յեթե հնարավորութեան են տալիս մտենալու այն մասսային, վորին վոշ մի ձեռք չի կպել, միլյոնավոր աշխատավորների այն շերտերին, վորոնք քաղաքականութեանից դուրս են կանգնած. սակայն նրանք-անկուսակցական կոնֆերանսները վնասակար են, յեթե «անկուսակցականների» գույնով ներկված ես-երներին ու մենշեիկներին տապաբեղ են տալիս: Այսպիսի մարդիկ նպաստում են խռովութեաններին, ոգնում են սպիտակ գվարդիականութեանը: Թե բացահայտ ու թե անկուսակցականի գույնով ծրուտված ես-երների ու մենշեիկների տեղը բանտն ե

(կամ արտասահմանյան գրական հանդեսները, սպիտակ գվարդիականների կողքին, Մարտովին յոժարութեամբ արձակեցինք արտասահման) բայց վոչ թե անկուսակցական կոնֆերանսները: Մասսաների տրամադրութիւնն ստուգելու, մերձենալու ուրիշ ճանապարհներ կարելի չե յե պետք է գտնել: Թող գնա արտասահման, ով կամենում է, պարլամենտարիզմ, Ասհմանադիր ժողով, անկուսակցական կոնֆերանս խաղալու. գնացեք այնտեղ, Մարտովի մոտ, համեցեք խնդրեմ, փորձեցեք «գեմոկրատիայի գրովչութիւնը, Վրանգելի զինվորներից» հարց ու փորձ արեք գեմոկրատիայի այս գրովչութիւն մասին, շնորհ արեք: Իսկ մենք ժամանակ չունենք տեսնելու, թե ինչպես են կոնֆերանսներում «ոպպոզիցիայ» խաղում: Մենք շրջապատված ենք համաշխարհային բուրժուազիայի կողմից, վոր հսկում է յն սպասում տատանման յուրաքանչյուր բոպեյի, վորպես զի հետ դարձնե «յուրայիների», վորպետղի վերականգնե կալվածատերերին ու բուրժուաներին: Մենք կշարունակենք բանտում պահել ես-երներին ու մինչևիկնե-րին, բացահայտ լինեն նրանք, թե «անկուսակցական» գույնով ծպտված:

Մենք ամեն միջոցներով ավելի սերտ կապեր կհաստատենք աշխտավորների այն մասայի հետ, վորին չե շոշափել քաղաքականութիւնը, բացի այն միջոցներից, վորոնք ազատ ասպարեզ են տալիս մենչևիկներին ու ես-երներին, ազատ ասպարեզ են տալիս այն տատանումներին, վորոնք նպատակաւոր են Միլյուկովին: Մենք ստանձին յեռանդով զեպի խորհրդային աշխատանք կմզկնք հարյուրավոր ու հարյուրավոր անկուսակցականների, իսկական անկուսակցականների, վորոնք մասսայից են դուրս յեկել, շարքային բան-վորներից ու գյուղացիներից, յե վոչ թե նրանց, վորոնք անկուսակցական գույնով են ներկվել, վորպետղի մինչևիկական ու ես-երական կարգազրեբ (наказ) կարգան, կարգազրեբ, վորոնք Միլյուկովին են ձեռնտու:

անհրաժեշտ դարձրեց այս անցումը, վորովհետև պարզվեց, վոր խոշոր արդյունաբերութիւն արագ վերականգնումն անհնարին է:

Այստեղից ըզխում է՝ առաջին հերթին գյուղացու գրութիւնը բարելավել: Սրա միջոցը պարենհարկն է, յերկրագործութիւն ու արդյունաբերութիւն միջև շրջանառութիւն դարգացումը մանր արդյունաբերութիւն դարգացումը:

Շրջանառութիւնը առևտրի ազատութիւն է, կապիտալիզմ է: Այս մեզ ոգտակար է այն չափով, վոր չափով կոգնե կուվել մանր արտադրողի փոշիացած վիճակի ու վորոշ աստիճան էլ նայե ըյուրոկրատիզմի դեմ: Չափը կորոշե գործնական կյանքը, փորձը: Պրոլետարական իշխանութիւն համար այստեղ վոչինչ չկա սարսափելի, քանի դեռ պրոլետարիատն յուր ձեռքում ամուր բռնած է պահում իշխանութիւնը, յուր ձեռքում ամուր պահում է փոխադրութիւն միջոցներն ու խոշոր արդյունաբերութիւնը:

Սպեկուլյացիայի դեմ վարած կռիվը պետք է փոխարկել մի կուվի, վոր մզվում է հափշտակութիւնների դեմ, ու պետական հսկումից, հաշվառքից ու վերահսկողութիւնից խուսափող շեղումների դեմ: Այսպիսի վերահսկողութիւն միջոցով մենք վորոշ չափով անխուսափելի ու մեզ անհրաժեշտ կապիտալիզմն ուղղում ենք պետական կապիտալիզմի հունի մեջ:

Յերկրագործութիւն ու արդյունաբերութիւն միջև շրջանառութիւնը վարկ տալու գործում տեղերի նախաձեռնութիւն, ձեռներեցութիւն, ինքնուրույնութիւն բազմակողմանի, ամեն կերպ դարգացում, ինչ գնով ուզում է լինի: Գործնական փորձի ուսումնասիրութիւն այս տեսակետից, այս փորձի ըստ կարելվոյն շատ բազմազանութիւն:

Ոգնություն մանր արդյունաբերութեանը, վոր ծառայում է գյուղացիական յերկրագործութեան յե ոժանդակում է նրա վտաքի կանգնելուն: Ոգնություն նրան մինչև վորոշ աստիճան՝ պետական հում նյութ մատակարարելով: Սմենամեծ հանցանքն հում նյութն անմշակ թողնելն է:

Չվախենանք այն «ուսումից», վոր կոմունիստները պիտի ստանան բուրժուական սպեցներից, վորոնց թվում նայե թե առևտրականներից, թե կոոպերատոր—կապիտալիստիկներից ու թե կապիտալիստներից: Սրանցից սովորելը ձևով է տարբեր, իսկ գործի ելությունը նույնն է, ինչ սովորում ու ձևք ելինք բերում ռազմասպեցներից: «Գիտութեան» հետևանքները պետք է վերաստուգել գործնական փորձով. ավելի լավ արա, քան անում ելին կողքիդ բուրժուական սպեցները. այսպես թե այնպես կարողացիր հասնել այն բանին, վոր վտաքի հանես յերկրագործութեանը, զարկ առա արդյունաբերութեանը, յերկրագործութեան ու արդյունաբերութեան միջև կատարվող շրջանառութեան զարգացմանը: Ժլատություն մի արա «գիտութեան համար» վճարելիս. գիտութեան համար վճարելն այիսուս չէ, միշտայն թե ուսումը կարգին գնա:

Պետք է ամեն կերպ ոգնել աշխատավորների մասսային, մտանալ նրան, նրա միջից հարյուրավոր ու հազարավոր գործիչներ առաջ քաշել անտեսական աշխատանքին լծելու համար, իսկ կրոնշատի նմանութեամբ անկուսակցական նորաձեռիկ զգեստ հագած մենչեիկներին ու ես—երներին պետք է զգուշութեամբ պահել բանտում կամ ուղարկել Բերլին. Մարտովի մոտ՝ զուտ զեմոկրատիայի ամեն զրավչութեաններն ոգտագործելու համար, Չերնովի, Միլյուկովի, վրացի մենչեիկների հետ մտքերի ազատ փոխանակութեան կատարելով համար:

1921 թ. ապրիլի 21-ին
21162 - 0099

«Ազգային գրադարան»



NL0180558

1857